Ազգ

AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 22
1992
Հինգշաբթի

օրաթերթ
Բ տարի, թիւ 114 (206)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

ՌԱԿ-ը թիկունք է կանգնում Բիլ Քլինթոնին

Ռամկավար ազատական կուսակցության Մ. Նահանգների զույգ շրջանների վարչությունները հրապարակել են մի հայտարարություն (ամբողջական տեքստը կհրապարակվի հաջորդ համարում), որով Մ. Նահանգների նախագահական ընտրապայքարում թիկունք են կանգնում Դեմոկրատական կուսակցության նախագահական թեկնածու Բիլ Քլինթոնին եւ փոխնախագահության թեկնածու Էլ Գորին առաջիկա նոյեմբերի 3-ին կայանալիք ընտրություններում: Հայության եւ Հայաստանի նկատմամբ նախագահ Բուշի վարչության ոչ նպաստավոր գործունեությունը ճնշադատելուց հետո, հայտարարության մեջ հույս է հայտնվում, որ Քլինթոնի գլխավորությամբ Ամերիկան ոչ միայն ոտի բարգավաճի տնտեսապես, այլեւ բարեբար դեր կխաղա ընդհանրապես մարդկային հիմնական արժեքների պաշտպանության, ինչպես նաեւ Հայաստանի հարցում: «Քվեարկենք փոփոխության համար, քվեարկենք հույսի համար», վերջում ընտրողներին կոչ է անում հայտարարությունը: Երեկ տեղեկացանք, որ ՀՅԴ-ի Հայ Դատի հանձնախումբը նույնպես թիկունք է կանգնում Քլինթոնին: ■

Ռազմական դրության մասին օրենքը վերադարձվեց մշակման

Երեկ ՀՀ Գերագույն խորհուրդը վերամշակման վերադարձրեց Հայաստանի Հանրապետության նախագահի անունից ներկայացված «Հանրապետության առանձին շրջաններում ռազմական դրություն հայտարարելու մասին» ՀՀ ժամանակավոր օրենքի նախագիծը: Թեեւ այդ օրենսդրական ակտի կարեւորությունը բազմաթիվ անգամ ընդգծել են ռազմական համակարգի գործիչները, սակայն պաշտպանության հարցերով պետնախարար, պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի «հովանավորությամբ» մատուցված օրենքը բավականին թերություններ ուներ:

ՀՀ ԳԽ պատգամավոր Պարույր Հայրիկյանի կարծիքով, դրանցից ամենացայտունն այն է, որ *«Նախագծում չի երեւում հանրապետության նախագահի դերը՝ եթե որեւէ շրջանում ռազմական դրություն է մտցվում, ապա դա նշանակում է, որ այնտեղ մտցվում է նախագահական կառավարում: Այնինչ, այս օրենքով շրջ պատասխանատվությունը եւ իրավունքները դրվում են կառավարության վրա: Ստացվում է, որ կամ նախագահն է ցանկանում ազատվել օրենքով իր վրա դրված պարտականությունների որոշակի մասից, կամ նրան մեկուսացնելու լուրջ խոչընդոտներ են կատարվում»:*

Նախագծի վերաբերյալ բազմաթիվ դիտողություններ ուներ նաեւ ՀՌԱԿ խմբակցությունը, որոնք ներկայացրեց նրա անդամ, ՀՀ ԳԽ պատգամավոր Ռաֆայել Պետրոսյանը. *«Մեզ առաջին հերթին անհանգստացրեց այն հանգամանքը, որ օրինագծի մեջ առկա ոչ միայն թվով անորոշ ձեւակերպումները հետագայում կամայականությունների տեղիք կտան: Դրանով առաջին հերթին աչքի է ընկնում օրենքի վերնագիրը, որտեղ գրված է՝ «առանձին շրջաններում»: Մինչդեռ հասկանալի է, որ ներկա պահին խոսք կարող է լինել միայն Ադրբեջանի հետ սահմանակից տարածքների մասին: Գրված է նաեւ, որ ռազմական դրություն կարող է հայտարարվել «արտաքին վտանգի դեպքում»: Այնինչ արտաքին վտանգը, բացի ռազմականից կարող է լինել եւ քաղաքական, եւ տնտեսական: Մի խոսքով, անորոշ ձեւակերպումները միայն չէին: Պարզ չէր նաեւ, թե ինչպե՞ս են կարգավորվելու տեղական իշխանությունների եւ ռազմական դրությունը իրականացնող ղեկավարների փոխհարաբերությունները, եւ ի՞նչ կարգով են լուծվելու նրանց միջեւ ծագած վեճերը»:*

Այսպիսով, ռազմական դրություն հայտարարելու մասին հանրապետության համար այնքան անհրաժեշտ օրենքն այս անգամ եւս չընդունվեց: Հ.Պ.

Ղարաբաղ. Լիսագորի մոտից հակառակորդը խուճապահար փախուստի է դիմել

Ստեփանակերտ, 21 հոկտեմբեր, մեր սեփ. թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ հաղորդում է.

Իրադրությունը ԼՂՀ ամբողջ տարածքում շարունակում է մնալ լարված: Ադրբեջանի բանակի սադրաբաժանումները չեն հրաժարվում Լաչինի մարդասիրական միջանցքը փակելու մտադրությունից՝ այդ նպատակով օգտագործելով իրենց բոլոր հնարավորությունները: Ճանապարհը վերահսկող ԼՂ ինքնապաշտպանության ուժերը ոչ միայն կասեցրել են թշնամու բոլոր գրոհները, այլեւ գործողություններ են ձեռնարկում այդ ճանապարհով անվտանգ երթեւեկությունն ապահովելու կայուն երաշխիք ստեղծելու համար: Այսօր առավոտյան ժամը 7:00-ին հայ ազատամարտիկները մարդասիրական միջանցքի ռազմաճակատային հատվածում անցնելով հակագրոհի, ոչնչացրել են Լիսագորից ոչ հեռու գտնվող «Նոյյան տաղաւ» գործակալությունը, առանց աղբյուրները մատնանշելու հայտնում է, թե երեկ ադրբեջանական ռազմական ինքնաթիռները ռմբակոծել են Մարտունու մեծաքանակությամբ: Կան ավերածություններ: Միաժամանակ Ղաջարում տեղակայված հենակետերից «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Մարտունի քաղաքն ու շրջանի Ճարտար գյուղը: Երեկ կեսօրին հրետակոծությունը շարունակվում էր:

Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, թե հայկական Սու-25 եւ ՄիԳ-25 ինքնաթիռները ռմբակոծել են Զանգելանի շրջանը, որի հետեւանքով իբր զոհվել են 5 կանայք եւ 10 երեխաներ: Տեղեկացվում է, որ ռմբակոծվել են նաեւ Ղուբաթլիի, Լաչինի եւ Ղազախի շրջանների բնակավայրերը:

Երեքշաբթի երեկոյան Ադրբեջանի խորհրդարանը հաստատել է նախագահ Էլչիբեյի հրամանագիրը, համաձայն որի Ղուբաթլիի շրջանում արտակարգ դրություն է մտցվում: ■

Ադրբեջանական օդուժը ռմբակոծում է Մարտունին

Վկայակոչելով ԼՂՀ Գերագույն խորհրդի մամուլի ծառայությունից ստացված տեղեկությունները, «Սնարֆ» գործակալությունը հայտնում է, որ երեկ օրվա առաջին կեսին Ստեփանակերտում իրավիճակը հանգիստ է եղել: Իսկ նախօրեին՝ հոկտեմբերի 20-ին ադրբեջանական բանակի ռազմական ինքնաթիռները ռմբակոծել են Մարտունու եւ Հադրութի շրջանների մի շարք խաղաղ բնակավայրեր: Խաղաղ բնակիչների մեջ կան տուժածներ:

Նույն աղբյուրները հայտնում են նաեւ, թե Լեռնային Ղարաբաղի հյուսիսում՝ Մարտակերտի շրջանում ընթանում են դիրքային մարտեր: ԼՂՀ Գերագույն խորհրդի մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանի տեղեկությունների համաձայն, զինադադարի համաձայնագրի խախտման բոլոր փորձերն արձանագրվում են ռուսասանյան դիտորդների կողմից: Ղարաբաղի օդերեւութաբանական վարչությունը հայտնում է, թե երեկ ադրբեջանական ռազմական ինքնաթիռները ռմբակոծել են Մարտունու մեծաքանակությամբ: Կան ավերածություններ: Միաժամանակ Ղաջարում տեղակայված հենակետերից «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Մարտունի քաղաքն ու շրջանի Ճարտար գյուղը: Երեկ կեսօրին հրետակոծությունը շարունակվում էր:

Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, թե հայկական Սու-25 եւ ՄիԳ-25 ինքնաթիռները ռմբակոծել են Զանգելանի շրջանը, որի հետեւանքով իբր զոհվել են 5 կանայք եւ 10 երեխաներ: Տեղեկացվում է, որ ռմբակոծվել են նաեւ Ղուբաթլիի, Լաչինի եւ Ղազախի շրջանների բնակավայրերը:

Երեքշաբթի երեկոյան Ադրբեջանի խորհրդարանը հաստատել է նախագահ Էլչիբեյի հրամանագիրը, համաձայն որի Ղուբաթլիի շրջանում արտակարգ դրություն է մտցվում: ■

Ընտ ադրբեջանցիների Վանք գյուղը գրավված

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, թե իբր ադրբեջանական բանակի կազմավորումները գրավել են Մարտակերտի շրջանի Վանք գյուղը եւ այնտեղից դուրս մղել «հայկական էքսթրեմիստական կորդուսին»:

Նույն աղբյուրների համաձայն, ներկայումս մարտական գործողություններ են ընթանում նաեւ Արխավենդի ուղղությամբ, որը կարեւոր նշանակություն ունի Ադրբեջանի կողմից Մարտակերտի շրջանում իրավիճակն ամբողջովին վերահսկելու համար:

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի լրատվական գործակալություններն այս մասին ոչինչ չեն հայտնում: ■

Արաբա-իսրայելական բանակցությունները

Երեկ Վաշինգտոնում, պետքարտուղարության շենքում սկսվեց արաբա-իսրայելական խաղաղության բանակցությունների 7-րդ փուլը: Լուգարողների առաջ փակ նիստերով կայացան Հորդանան-Իսրայել եւ Լիբանան-Իսրայել առանձնաժողովները: Այսօր սիրիական եւ պաղեստինյան ներկայացուցիչները առանձին-առանձին կհանդիպեն իսրայելացիներին: Քաղաքական դիտորդների կարծիքով, մինչեւ առաջիկա հինգշաբթի տեւելիք բանակցությունները դժվար թե որեւէ լուրջ արդյունքի հանգեն: Ամեն դեպքում նպաստում է ամերիկյան նախագահական ընտրությունների արդյունքին: Մյուս կողմից, գրավյալ հողերում երեկ շարունակվեցին խռովությունները: Դազայի խալիլ քաղաքում պաղեստինցիները հրազենով վիրավորեցին իսրայելական 2 զինվորի: Մ. Նահանգների պետքարտուղարի օգնական էդվարդ Ջերեջյանն այդ առթիվ կողմերին կոչ հղեց ձեռնպահ մնալ նման գործողություններից, որոնք կարող են վտանգել խաղաղության խոսակցությունները Վաշինգտոնում: ■

Խորվաթիան ու «Նոր» Հարավսլավիան պայմանավորվեցին

Խորվաթիայի եւ «Նոր» Հարավսլավիայի նախագահները պայմանագիր կնքեցին արագացնելու իրենց միջեւ հարաբերությունների բնականոնացումը: Իր հերթին, Բոսնիայի ղեկավար Իզեթբեգովիչը հայտարարեց, թե համաձայն է իր հանրապետությունը ըստ էթնիկական հատկանիշների 8-10 ինքնավար շրջանների բաժանելու միջազգային միջնորդների առաջարկին եւ պատրաստվում է մինչեւ տարեվերջ իր լիազորությունները վայր դնել: Մյուս կողմից, երկօրյա դադարից հետո երեկ Սարաեւոյում վերսկսվեցին գնդակոծությունները, անորոշ ժամանակով առկախելով միջազգային մարդասիրական օգնությունը մայրաքաղաքի բնակչությանը: ■

Իրաքյան ընդդիմադիրների համաժողով

Քրդական տարբեր կազմակերպությունների գլխավորությամբ, օրերս ընդդիմադիրների համաժողով է տեղի ունենալու Իրաքյան Քրդստանի Իրբիլ քաղաքում, գլխավոր նպատակ ունենալով Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումը եւ քրդական որոշ կազմակերպությունների պահանջով, դաշնակցային Քրդստանի ստեղծումը: Երեկ Թեհրանում ՄԱԿ-ի շենքի առաջ հանրահավաք տեղի ունեցավ վարանդի 5 իրաքցիների մասնակցությամբ, որոնք պահանջեցին նախագահ Հուսեյնի իշխանության տապալումը: Ցուցարարներին միացել էր նաեւ իրանցի ազդեցիկ կրոնավորների մի խումբ: ■

ՀԲԸ Միության համագումարը Աթենքում

Առաջիկա ուրբաթ օրը Հունաստանի մայրաքաղաքում կսկսվի Հայ բարեգործական ընդհանուր միության տարեկան համագումարը, որտեղ 25 երկրներից եկած եւ 125 մասնաճյուղեր ներկայացնող պատվիրակների մասնակցությամբ: Օրակարգում կան ՀԲԸՄ-ի շրջանակների գործունեության, կրթական, մշակութային եւ երիտասարդական աշխատանքների, ինչպես նաեւ Բարեգործականի կողմից Հայաստանում կատարված ներդրումների արդյունավորմանը վերաբերող հարցեր: Համագումարի առջեւ ամփոփիչ զեկուցումով հանդես կգա ՀԲԸՄ-ի նախագահ տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնը: Հոկտեմբերի 23-25-ը կայանալիք համագումարի վերջում տեղի կունենա Կենտրոնական վարչական ժողովի անդամների մասնակի ընտրություն:

ՀԲԸՄ ցկյանս պատվակալ նախագահն է Ալեք Մանուկյանը: ■

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱ՞Ր

Ոչ պաշտոնական, բայց հավաստի աղբյուրների համաձայն, հանրապետության նախագահը պատրաստվում է կառուցվածքային փոփոխություն մտցնել գործադիր իշխանության համակարգի մեջ, արտգործնախարարությունը վերածելով պետքարտուղարության: Նույն աղբյուրների համաձայն, իշխանության բարձրագույն շրջանակում տարբեր թեկնածուների դարագան (ինչպես՝ Ժիրայր Լիպարիտյան, Ատոմ Ոսկանյան) ճնշելուց հետո որոշվել է պետքարտուղարի պաշտոնը վստահել նախագահի խորհրդականներից Ատոմ Մանուչարյանին, որն, ինչպես երեկ էինք հաղորդել, արդեն վերադարձել է Վազգեն Մանուկյանի պետնախարար նշանակվելու նախօրեին վերցրած անակնկալ «արձակուրդից»:

Ենթադրվում է, որ պետքարտուղարը կզբաղեցնի ոչ թե արտգործնախարարության, այլ նախագահական աղարանի գրասենյակներից մեկը:

Ինչ վերաբերում է պետքարտուղարության տնօրենի պաշտոնին, այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները մատնանշում են արտգործնախարարի տեղակալ Գեորգի Ղազինյանի անունը, պնդելով այդ որոշման անհապաղաստակահարմարությունը, նկատի ունենալով, որ այդ պաշտոնում անհրաժեշտ են հատկապես կազմակերպչական ընդունակություններ:

Մյուս կողմից, համառ զրույցներ են շրջում այն մասին, թե ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը օրերս կնշանակվի պետնախարար նույն գծով:

«Աշխատանքից ազատել

կառավարությանը, եւ ոչ թե հանձնարարություններ» ընդհանուր կարգախոսի տակ երեկ բազմամարդ ցույցեր տեղի ունեցան Լոնդոնում եւ անգլիական այլ քաղաքներում: Քարածխի բրիտանական հանքահորերի կեսից ավելին փակելու կառավարության մտադրությունը փողոց էր հանել տասնյակ հազարավոր հանքագործների ու նրանց համակիրներին, որոնք պահանջում էին Մեյջորի կառավարության հրաժարականը: ■

ՆԱՏՕ-ն ծրագրում է խաղաղապահ գործունեություն

Շոտլանդիայում կայացած ՆԱՏՕ-ի երկրների արտգործնախարարների ժողովը որոշեց կոնկրետ ծրագիր մշակել Եւրոպայում խաղարար եւ խաղաղապահ գործունեություն ծավալելու համար: Նիստի մասնակիցների անունից հույս հայտնվեց, որ նախկին Վարշավյան ուխտի երկրներն այդ հարցում կհամագործակցեն իրենց հետ: Հանդիպման գլխավոր նպատակն էր ՆԱՏՕ-ի միջուկային զենքերի կրճատման հարցի քննարկումը: ■

digitised by A.R.A.R.@

Նոյեմբերի 1-ից հացի կտրոններ

Երեկ ՀՀ Գերագույն խորհրդի նիստում Հայաստանի կառավարության վարչապետ Խոսրով Հարությունյանը հայտարարեց, որ ինքը նույն օրն արդեն ստորագրել է հացը կտրոններով բաշխելու մասին կարգադրությունը: Այն ուժի մեջ է մտնելու նոյեմբերի 1-ից:

Գերագույն խորհրդի՝ այդ միջոցառման համար կառավարությանը տված ժամկետը ավարտվել էր հոկտեմբերի 21-ին. վարչապետը բացատրեց, որ անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները անհնար դարձրեցին տրված 14 օրում դրա կատարումը:

Միաժամանակ կառավարության ղեկավարն ընդգծեց, որ հացի կտրոններով բաշխումը հնարավոր կլինի, եթե Գերագույն խորհուրդը ՀՀ իրական օրենսգրքում իրենց կողմից առաջարկվող փոփոխություններ կատարի եւ վավերացնի «Հայաստանի Հանրապետությանը վարկ տրամադրելու մասին» ՀՀ կառավարության եւ եւրոպական երկրների տնտեսական համագործակցության միջեւ հուլիսի 20-ին կնքված համաձայնագիրը:

Ինչպես պարզվեց ԳԽ ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ Տիգրան Սարգսյանի հաղորդումից, խոսքը 37 մլն էյուի (որը հավասար է 52 մլն դոլլարի) մասին է: Խոշոր չափերի այս վարկը հիմնականում ծախսվելու է հացահատիկ ձեռք բերելու համար, որոշ մասը կտրամադրվի դեղորայք գնելուն:

Համաձայնագիրը նաեւ խիստ պահանջներ է պարունակում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ պետք է վճարվեն վարկի տոկոսները, որը տարեկան 13 տոկոս է կազմում, իսկ ողջ պարտքը անհրաժեշտ է վերադարձնել երեք տարվա ընթացքում: Այն դեպքում, երբ հերթական 6-ամսյա ժամկետում համապատասխան տոկոսները չվերադարձվեն, Հայաստանը պարտավոր է ամբողջությամբ մարել ողջ պարտքը: Բացի այդ, հանրապետությունը տեր է կանգնել տնտեսական համագործակցության կողմից նախկին ԽՍՀՄ-ին տրված վարկի (1250 մլն էյու) իր մասնաբաժնին՝ 37 մլն էյու, որն արդեն քաղաքական պահանջ է:

Ի՞նչ միջոցների հաշվին է պատրաստվում ՀՀ կառավարությունը վերադարձնել պարտքը եւ մարել վարկի տոկոսները: Պարզվում է, հացի գների բարձրացման հաշվին՝ դեռ հուլիսի 20-ից այն պետք է վաճառվեր կիլոգրամը 15 ռուբլով:

Նման պայմաններով համաձայնագիրը դժվար է վավերացնել, սակայն Ռուսաստանի «էխոպորտ խլեբը» փոխարինաբար Հայաստանին է տրամադրել 100 հազար տոննա հացահատիկ, երաշխիք ունենալով այդ համաձայնագիրը: Դրա հետ միասին, ինչպես նշեց Խոսրով Հարությունյանը, հացի ձեռքբերման համար ուրիշ այլ միջոցներ գործնականում Հայաստանը չունի: Պատգամավորներից շատերը առաջարկեցին լրացուցիչ նիստ հրավիրել, բայց գործը քվեարկության չհասավ, քանզի օրվա վերջում դարձյալ քվորում չապահովվեց: Հ. Պ.

Դեսպանները Հայաստանին օգնելու ցանկություն ունեն

Երեկ վարչապետ Խոսրով Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ Ռուսաստանում եւ Հայաստանում Նիդեռլանդների, Բելգիայի, Շվեդիայի եւ Իտալիայի դեսպանները պատրաստակամություն են հայտնել մշակել եւ ներկայացնել համագործակցության վերաբերյալ իրենց երկրների կառավարությունների մոտեցումներն ու առաջարկները: Նրանք հետաքրքրվել են, թե շրջափակման պայմաններում ինչ ճանապարհներով է կարելի Հայաստան հասցնել իրենց երկրների հնարավոր մարդասիրական օգնությունը: ■

Նորաս Տեր-Գրիգորյան. «Մեր խնդիրն է ստեղծել կանոնավոր զինված ուժեր»

Նոր նախարարի նշանակումը ճիշտ քայլ էր

Մեր թղթակցի հարցերին պատասխանում է պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Հայաստանի զինված ուժերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Նորաս Տեր-Գրիգորյանը:

– Ինչպիսի՞ն է հանրապետության եւ ԼՂՀ-ի ռազմական իրավիճակի ընդհանուր բնութագիրը:

– Այսօր շատ ծանր է իրադրությունը: Ադրբեջանն անընդհատ խախտում է Սոչիի համաձայնագիրը: Ու թեեւ որոշ սահմանամերձ շրջաններում ադրբեջանական կողմից նկատվում է որոշակի հանդարտացում, բայց դա ժամանակավոր բնույթ է կրում, եւ շատ հաճախ այդ ակտիվությունը ի հայտ է գալիս ու նորից չքանում: Երեկ Տաուշի շրջանում ողջ գիշեր՝ 20:30-6:30 անընդհատ կրակել են: Ավելին, զանգվածային ձեւով խախտելով Հայաստանի օդային սահմանները, զնդիկավոր ռումբեր են նետել Տեղ գյուղի շրջանում: Այդ կապակցությամբ մեր կառավարությունն անհապաղ պետք է ձեռնարկի տարբեր բնույթի միջոցառումներ: Ղարաբաղում ծավալված լայնածավալ հարձակման հիմնական նպատակն այն է, որ մինչ բոլոր դիտորդների ժամանումը Ադրբեջանը հնարավորին չափ շատ տարածքներ զավթի: Միեւնույն ժամանակ պետք է նշեմ, որ Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը արժանի հակահարված են տալիս, թեեւ, ցավոք, կան նաեւ զոհեր:

– Փաստորեն Սոչիի համաձայնագիրը մնաց թղթի վրա:

– Այդ համաձայնագիրը խախտվում է Ադրբեջանի կողմից: Եւ Բաքվում գտնվող դիտորդ գեներալ-մայոր Գլուշչուկը եւ Երեւանում գտնվող գեներալ-մայոր Կալնեւը վերահսկում են իրավիճակը: Ռուսական դիտորդներն արդեն համոզվել են, որ հիմնականում խախտում են ադրբեջանցիները: Անգամ այն պահին, երբ հեռախոսով նրանց պաշտպանության նախարարին հայտնում եմ, թե ադրբեջանական օդուժը ռմբակոծում է Ստեփանակերտը, նա պնդում է, թե ինքնաթիռներ չի ուղարկել: Հարց եմ տալիս, եթե այդ ինքնաթիռները Ադրբեջանինը չեն, ապա ո՞ւմն են. Թուրքիայի՞նը, թե Իրանինը:

– Իսկ ինչո՞ւ մեր հակաօդային պաշտպանությունը հակահարված չի տալիս:

– Այդ ինքնաթիռները թռչում են 14 կմ բարձրության վրա եւ հնարավոր չէ մեր զենիթային կայանքներով դրանց խփել: Նրանք էլ դա իմանալով անընդհատ ռումբեր են գցում, հատկապես այն բնակավայրերում, որտեղ ապրում են խաղաղ մարդիկ:

Ընդ որում, որքան ինձ հայտնի է, Էլչիբեյը հայտարարել է, թե իրենք ԱՊՀ դիտորդների փոխարեն ցանկանում են ԵԱՀԽ-ի ներկայացուցիչներին: Բայց եթե դա այդպես է, ապա ինչո՞ւ էին ստորագրում Սոչիի համաձայնագիրը, խաբելով ոչ միայն մեզ, այլեւ միջազգային հասարակայնությանը:

Ստեփան Սարգսյան

– Նաեւ իրականությունն է ցույց տալիս, որ բացի Ռուսաստանից մյուս երկրների դիտորդները չժամանեցին:

– Բիշքեկում հանդիպելով Ղազախստանի, Ուկրաինայի, Բելառուսի եւ Վրաստանի ղեկավարներին, մենք բարձրացրինք նրանց կողմից դիտորդներ ուղարկելու հարցը: Մինչեւ այդ երկրների խորհրդարանները չհաստատեն, ոչ մի դիտորդ չի գա շրջան, իսկ դա պարզ է, թե ինչքան կձգձգվի: Ես ընդհանրապես որեւէ հույս չունեմ, թե այդ դիտորդները կգան: Միայն Վրաստանին կարելի է հասկանալ, որովհետեւ առանց այն էլ այնտեղ ծանր իրադրություն է:

– Իսկ այն փաստը, որ միայն Ռուսաստանից են եկել դիտորդներ, արդյոք մեզ ստիպո՞ւմ է, որ այդ խնդրում հույսներս կապենք միայն Ռուսաստանի հետ:

– Ճիշտ է, Ռուսաստանն առաջինն է կատարել իր պարտավորությունները, բայց մենք պետք է մեր հարաբերությունները զարգացնենք աշխարհի բոլոր երկրների հետ:

– Երեկ Հայաստանի նախագահի հրամանագրով պաշտպանության նախարարի պարտականությունները դրվեցին պետնախարար Վազգեն Մանուկյանի վրա: Ինչպե՞ս եք մեկնաբանում այս փոփոխությունը:

– Դա կառավարության եւ նախագահի որոշումն է եւ շատ բնական: Նախկին նախարար Վազգեն Սարգսյանն ասաց, որ իր համար շատ դժվար է ղեկավարել նոր ընթացքը: Այժմ դրված է զինված ուժերի ստեղծման հարցը: Ադրբեջանն այդ հարցը լուծել է դեռ հունվարին, իսկ մենք բավականին ուշացել ենք: Եւ ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ այդ բանակը մենք անպայման կստեղծենք:

– Իսկ Ձեզ չի՞ թվում, որ պաշտպանության նախարարությունը պետք է ղեկավարեն պրոֆեսիոնալ զինվորականները:

– Ոչ: Այն, որ նախարարության ղեկին կանգնած է քաղաքացիական անձնավորություն, պայմաններ է ստեղծում, որ պրոֆեսիոնալ զինվորականները զբաղվեն զինված ուժերի ստեղծմամբ: Դա շատ ճիշտ քաղաքականություն է: Իմիջիայլոց, Հայաստանն առաջինն էր նախկին Խ. Միությունում, որի պաշտպանության նախարարը քաղաքացիական անձ է: Արտասահմանում դա շատ է տարածված: Այդ փոփոխությունները բնական են, եւ ես հույս ունեմ, որ դրանք կունենան դրական ազդեցություն:

Հարցազրույցը վարեց
ՀԱԿՈԲ ՍՍՍՏՐՅԱՆԸ

Ղարաբաղի պատգամավորական կորպուսը նոսրացել է

Հադրութի շրջանի պատգամավորական կորպուսի մեկ երրորդը տուժել է Ադրբեջանի ագրեսիայի պատճառով: «Սնարք»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ Հադրութի շրջգործկոմի նախագահ Էլմիր Նավասարդյանը հայտնեց, որ պատգամավորներից շատերը դարձել են փախստական, մի մասը զոհվել է հրետակոծությունների եւ ռմբակոծությունների ժամանակ, մի մասն էլ զենքը ձեռին պաշտպանում է հայրենի գյուղերը ադրբեջանական հրոսակներից:

Նա ասաց, թե այսպիսի պայմաններում խոսք չի կարող լինել տեղական խորհուրդների լիարժեք աշխատանքի մասին: Նրանց գործունեությունը վերականգնելու համար անհրաժեշտ են նոր ընտրություններ, կարծում է Նավասարդյանը: Սակայն, նրա կարծիքով, մինչեւ առճակատման դադարեցումը քաղաքական այդպիսի գործ կատարելն անհնար է:

Ինչպես «Սնարք»-ի թղթակցին տեղեկացրեց ԼՂՀ ԳԽ քարտուղար Վլադիկ Հակոբյանը, նույն վիճակն է տիրում նաեւ ԼՂՀ մյուս շրջաններում, ինչպես նաեւ Ստեփանակերտում: ■

Փոփոխություններ Ադրբեջանի Նախարարների կաբինետում

Հոկտեմբերի 20-ին Ադրբեջանի ազգային ժողովը սկսել է քննարկել Նախարարների կաբինետում փոփոխություններ մտցնելու հարցը: Այդ քայլի նպատակն է լուծարքի ենթարկել երկրի բարձրագույն գործադիր իշխանության բյուրոկրատական կառուցվածքի համակարգը: Այդ խնդիրն ի հայտ էր եկել Մուբալիբովի օրոք, երբ նրա ցանկությամբ խորհրդարանը ուղղում էր մտցրել երկրի սահմանադրության մեջ, որի համաձայն նախագահը դարձել էր հանրապետության բարձրագույն գործադիր իշխանության ղեկավար: Այդ ուղղումն ընդունվել էր միայն մեկ նպատակով՝ չեզոքացնել ամենամոտ քաղաքական հակառակորդին՝ վարչապետ Հասան Հասանովին:

Մուբալիբովի կողմից ստեղծված նախագահական աղարատը եւ խորհրդականների ինստիտուտն իրենց վրա էին վերցրել կառավարության հիմնական ֆունկցիաները, ինչը, հանրապետության այժմյան արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովի կարծիքով, երկիշխանության կազմավորման սկիզբն էր, իսկ ընդդիմադիր ազգային անկախության կուսակցության նախագահ Էրիքար Մամեդովի խոսքերով, այդ քայլը հանգեցրել է լրիվ անիշխանության:

Պատգամավորները դիմել են նախագահի աղարատին՝ 15 օրվա ժամկետում բարձրագույն գործադիր իշխանության նոր կառուցվածք ներկայացնելու խնդրանքով: Հնարավոր է գործադիր իշխանության վերակառուցման 3 տարբերակ. լուծարել Նախարարների կաբինետը եւ նրա ֆունկցիաները հանձնել նախագահի աղարատին, լուծարել նախագահի աղարատը եւ նրա ֆունկցիաները հանձնել նախարարների կաբինետին:

Դիտորդների կարծիքով, ավելի հավանական է, որ պատգամավորները կնախընտրեն երրորդ տարբերակը: Ընդ որում, հիմնական ֆունկցիաները կկենտրոնանան նախագահի աղարատում: Դրա օգտին են խոսում քանակական փոփոխությունները: Վերջերս նախագահի աղարատի թվակազմն աճել է երեք անգամ, իսկ Նախարարների կաբինետինը՝ հիշ կրճատվել: ■

Վերջերս Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը եւ ՆԳՆ-ը համատեղ գործողություն են կատարել Գեռանբոյի շրջանի Թափ Կարակոյունլու եւ Կասըմբեյլի գյուղերում: Առգրավվել է մեծ քանակությամբ զենք-զինամթերք: ■

Էլչիբեյի մամուլի նոր քարտուղարը

Երեքշաբթի օրը Ադրբեջանի նախագահի մամուլի քարտուղար է նշանակվել Նաջաֆ Նաջաֆովը. «ԻՖ»-ին հայտնեցին նախագահի աղարատում: Նախկինում այդ պաշտոնը զբաղեցնող Նիյազի Իբրահիմովն ազատվել է սեփական ցանկության համաձայն: Նաջաֆովն Ադրբեջանի ժողովրդական ճակատի հիմնադիրներից է, փորձված լրագրող: Երկար ժամանակ նա եղել է Ազգ օրգան «Ազադլըղ», իսկ ավելի վաղ՝ «Մոլոդոյ Ազերբայջան» թերթերի խմբագիրը: ■

Վիզաները կտրվեն օդանավակայանում

«Այնա» թերթը հաղորդել է, որ մոտ ժամանակներս Բաքվի միջազգային օդանավակայանում կսկսի գործել Ադրբեջանի արտգործնախարարության հյուպատոսական խումբը: Այն կձեւակերպի օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերը, որոնք Ադրբեջան են ժամանում առանց վիզայի: Վիզայի նախատեսվող արժեքը կլինի 20 դոլլար, մուտքի-ելքի փաստաթղթերինը՝ 10-40 դոլլար, ինչը կախված է անձի քաղաքացիությունից: Վիզաների ժամկետի հետաձգումը մինչեւ 24 ժամ գնահատվում է 10 դոլլար, մինչեւ 48 ժ.՝ 20 դոլլար, մինչեւ 72 ժ.՝ 30 դոլլար, 72 ժամից ավելի՝ 40 դոլլար: Ինչպես «Թուրան» գործակալությանը հաղորդեցին հանրապետության արտգործնախարարությունում, վիզայի մուտքի համակարգը չի վերաբերում այն պետությունների քաղաքացիներին, որոնց հետ Ադրբեջանը կնքել է ազատ տեղաշարժի մասին երկկողմանի պայմանագիր: ■

Արթուր Շմիդտը Ադրբեջանում

Արդեն մի քանի օր է, ինչ Բաքվում դասախոսություններով եւ քարոզչությամբ հանդես է գալիս առողջ ապրելակերպի հարցերով հայտնի ամերիկացի մասնագետ Արթուր Շմիդտը: Նրա դասախոսությունները շոշափում են ժամանակակից ամենասուր խնդիրները, այդ թվում՝ թմրամոլության եւ գինեմոլության հետ կապված հարցերը: Նրա քարոզները նվիրված են ընտանեկան փոխհարաբերությունների, դաստիարակության եւ հասարակության բարոյական իրավիճակի խնդիրներին: Դոկտոր Արթուր Շմիդտը իր ունկնդիրներին նաեւ ծանոթացնում է Աստվածաշնչի հիմնական դրույթների հետ: ■

Ռուսաստանի սահմանապահները լքում են Ադրբեջանը

Ռուսական սահմանապահ ջոկատը, որը տեղակայված է ադրբեջանական Հորադիզ քաղաքում, դուրս կբերվի Ադրբեջանից հոկտեմբերի 25-ին: Այդ մասին «ԻՖ»-ին հայտնեցին անդրկովկասյան սահմանապահ օկրուգի շտաբում: Ժամանակավորապես նրանք կտեղակայվեն Դաղստանի Դերբենտ քաղաքում: Արդեն Ադրբեջանի պետական սահմանի պաշտպանության կոմիտեին են հանձնված 9 սահմանապահ ուղեկալներ: Մոտ օրերս կհանձնվեն եւս երկուսը: Սահմանապահների շտաբում չեն բացառում զենք գրավելու նպատակով հարձակման հնարավորությունը Հորադիզից դուրս գալու ժամանակ: Անդրկովկասից ռուս սահմանապահների դուրս բերումը կավարտվի 1994 թվականի կեսին: ■

Մարիաննան լռեցնում է թնդանոթները

Երբ հեռուստացույցով ցուցադրում են Մարիաննային, թնդանոթները հայ-ադրբեջանական ճակատում լռում են: Կապանի բնակիչները «Լիտերատուրնայա գազետա» թերթի թղթակցին պատմել են, որ մինչեւ «Հարուստներն էլ են լալիս» ֆիլմի հերթական սերիայի սկիզբը հակամարտ ուժերը ազդանշանային հրթիռներ են բաց թողնում եւ դադարեցնում կրակը մինչեւ ֆիլմի վերջը: ■

digitised by A.R.A.R.@

Ընդամենը մի քանի ամիս առաջ Լուսավորության նախարարության եւ մամուլի վարչության ղեկավարները հպարտությամբ, ի լուր ողջ հանրապետության հայտարարեցին, թե նոր ուսումնական տարվա դասագրքերը տպված պատրաստ են, եւ այս հարցում միակ մտահոգող հանգամանքը դրանց բարձր գներն են: Այնուհետեւ տեղեկացանք, որ ՀՀ կառավարությունը դասագրքերի արժեքն իջեցնելու նպատակով 70 միլիոն ռուբլու դոտացիա է հատկացրել:

Նման օրերաշիվ եւ հոգատար աշխատանքի արդյունքում դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողներից պահանջվում էր միայն չափսսալ փողը եւ հետեւողականորեն այցելել գրախանութներ:

Մտածել էին նաեւ նրանց մասին, ովքեր անգամ հանուն երեխաների չէին կարող իրենց այդպիսի բռայլություն թույլ տալ՝ պետությունը եւս 20 միլիոն էր տրամադրել սոցիալապես անապահով ընտանիքների կրտսեր անդամներին՝ դասագրքեր ձեռք բերելու համար:

Հայտարարությունը՝ հայտարարություն, սակայն իրականում, երեխաների համար սկսվեցին ոչ այնքան հաճելի օրեր՝ ամեն տեսակ դեֆիցիտների հետեւից վազվզոցին ավելացավ նաեւ դասագրքեր ճարելու խնդիրը: Ավելին, «բավարար» քանակությամբ տպված դասագրքերի մի մասն այդպես էլ չհասավ հասցեատերերին: Այժմ որոշ առարկաներ աշակերտներն ուսումնասիրում են «երջանիկ» դասընկերների գրքերը ձեռքից ձեռք, նստարանից նստարան, տնից տուն փոխանցելով: «Կորածներից» են 2-րդ եւ 3-րդ դասարանների «Մայրենի լեզու»ն, 3-րդ դասարանի «Russkij zyk»ը: Գուցե դա մանկավարժական նոր հնարք է, եւ տարական դասարանների աշակերտների մեջ ընկերասիրություն եւ «մոտ մարդկանց» նկատմամբ հոգատարություն դաստիարակելու նպատակ է հետապնդում: Ուր էր թե: Հրատարակիչները՝ հանձինս մամուլի վարչության պետի տեղակալ Ռուբեն Բոբյանի եւ «Լույս» հրատարակչության փոխտնօրեն Հովհաննես Հարությունյանի պնդեցին, թե իրենք գիտակցելով ողջ պատասխանատվությունը, պարզապես գիշեր-ցերեկ աշխատելով դասագրքերի հիմնական մասը, այդ թվում նաեւ վերը նշվածները տպագրել են պատվիրված քանակով եւ ուղարկել գրախանութներ: Այնպես որ, ըստ նրանց, եթե որեւէ դասագիրք չի բավականացրել, բոլոր հարցերը պետք է ուղղել լուսավորության նախարարությանը:

Կրթության ղեկավարման բարձրագույն այս օղակի դպրոցների վարչության գլխավոր մասնագետ Հանլեթ Կարապետյանը զարմացած էր՝ ինքն էլ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես աշակերտների թվից ավելի պատվիրված գրքերը «հանկարծ» պակասեցին: Եվ նա խորհուրդ տվեց պատճառները փնտրել մամուլի վարչության ենթակայության տակ գտնվող «Հայգիրք»ի բազաներում ու գրախանութներում:

Սակայն դասագրքերի հարցում փոխադարձ մեղադրանքները միայն այս խնդրով չեն ավարտվում:

Մինչեւ այսօր նախօրոք պատվիրված 42 անուն դասագրքերից դեռեւս լույս չեն տեսել 13-ը: Ինչո՞ւ: Հրատարակչությունը մեղադրում է լուսավորության նախարարությանը՝ ժամանակին չեն ներկայացրել ձեռագրերը, թղթով չեն ապահովում, իսկ վերջինս՝ տպագրության գործի ղեկավարներին. մի երկու գրքերից բացի, մյուս դասագրքերի եւ ձեռնարկների ուշացումը միմիայն «Լույս» հրատարակչության մեղքով է կատարվել: Եվ որպես առաջնույց նշվում է այն փաստը, եթե այլ հրատարակչություններին պատվիրված առարկայական ծրագրերը վաղուց դպրոցներում են:

Պակաս պարադոքսային չէ նաեւ բարձր դասարանների համար նախատեսված դասագրքերի չվաճառվելու փաստը: Հրատարակչությունները տրնջում են, որ այսպես շարունակվելու դեպքում անգամ բանկերից բարձր տոկոսներով վերցված վարկերը չեն կարողանա վերադարձնել: Իսկ լուսնախարարությունը, որը դրա համար ոչ մի ֆինանսական պատասխանատվություն չի կրում, այս երեւույթը կապում է դպրոցի նկատմամբ մեծահասակ երեխաների ունեցած անտարբերության հետ, այսինքն՝ ուրախ կլինենք օգնել, բայց այդ հարցում մենք էլ ենք անզոր...

Դրությունն ավելի լարված է հաջորդ՝ 1993-94 թթ. ուսումնական տարվա դասագրքերի խնդրում. լուսավորության նախարարությունը մտադիր է պատվիրել 60 անուն գիրք, որոնցից 53-ը պետք է բոլորովին նոր լինեն: Այս հանգամանքն անշուշտ մեր հանրապետության կրթության բնագավառում վերջնական անկախության հասնելու ուղղությամբ կատարվող լուրջ քայլ է: Բայց ժամանակ շահելով, մենք չե՞նք հարվածի դասագրքերի որակին եւ բովանդակությանը: Մի հանգամանք, որն ակնթարթ է մասնակի, շատ դեպքում անհեթեթ բարեփոխումների ենթարկված այս տարվա նորաստեղծ դասագրքերում:

Մեր մտահոգությունն ավելի հասկանալի կդառնա, եթե հայտնենք, որ ներկա դրությամբ 53 անուն դասագրքերից ոչ մեկի ձեռագիրը դեռ «Լույս» հրատարակչություն չի ներկայացվել: Իսկ դա նշանակում է, որ նորից իր պայմանները կսկսի թելադրել «նորին մեծություն» շատողականությունը եւ ամեն գնով ժամանակին հասցնելու ու «պարտքի» կատարման մասին զեկուցելու մեզ լավ հայտնի իրավիճակը:

Լուսավորության նախարարությունից մեզ հայտնեցին, թե հեղինակների հետ կնքված պայմանագրերի համաձայն, նրանք ձեռագրերը պետք է հանձնեն մինչեւ այս տարվա դեկտեմբերի վերջը: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ընթացքի մեջ է առարկայական գիտա-մեթոդական խմբերի ստեղծումը, որոնք համաղատասխան գնահատականից հետո միայն ձեռագրերը կբուլլատրեն տպագրության:

Պետք է խոստովանել, որ վերջին այս փաստարկը ոչ թե մեղմացրեց, այլ ավելի սրեց դասագրքերի որակի եւ բովանդակության հարցում մեր ունեցած անհանգստությունը. նախ հանձնաժողովների աշխատանքն ավելի կձգձգի գրքերի՝ տպարան հանձնելու ժամկետները: Եվ երկրորդ, ժամանակի սղության գործոնը զգալիորեն կազդի նաեւ դասագրքերի «արժեքը» որոշող մասնագետների- գործունեության վրա: Այստեղից էլ կարվեն հետեւություններ, պետք չէ շատ մեծ տեղ տալ թերությունների բացահայտմանը, իսկ մերժելու մասին, պարզ է, խոսք անգամ թույլ չեն տա ասել:

Ցավոք, լուսավորության նախարարությունն առայժմ միայն տպագրման ժամկետներին վերաբերող՝ «Լույս» հրատարակչության արդարացի կոչամբանքներին է պատասխանել, ըստ էության ձեռնտու պատվերն ուրիշ այլ հրատարակչությունների միջեւ բաժանելու որոշում կայացնելով՝ դասագրքեր «ստեղծող» հիմնական մոնոպոլիստը պայմաններ թելադրողի իր առարկություններ չհանդուրժող կամքն է ցուցադրում:

Եւ քանի որ Հայաստանում կրթության եւ դաստիարակության գործը հիմնականում ինքնահոսի է մատնված, առա առանց սխալվելու կարելի է ընդել, որ դասագրքերի ստեղծման, գնահատման, պատվիրման, տպագրման եւ առաքման շրջանում այսօր արդեն ակնհայտ թերություններն իրենց մաշկի վրա դեռ երկար կզգան ծնողները, աշակերտները եւ գուցե որոշ ժամանակ անց՝ անտարբերության բքբիրից դուրս եկած «վարժարանները»:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԱՍԱԳՐՔԱՅԻՆ ԿՐՔԵՐ

որից տուժում են աշակերտները

Մի նամակի հետքերով

Մեր թերթի հուլիսի 25-ի համարում տպագրել էինք Արմավիրի շրջանի Երասխահուն գյուղի բնակիչ Գուրգեն Գեւորգյանի «Ալան-թալա»-ն, թե՞ Զանգիբասարի թալանը» վերնագրով նամակը: Ի՞նչ թալանի մասին էր գրել նամակագիրը: Արմավիրի շրջանի Երասխահունի գյուղացիներից մի քանիսը, տեսնելով, որ սեփականաշնորհումից հետո իրենց կոլտնտեսության անասունները կենտրոնացել են 2-3 մարդու ձեռքում, եւ իրենցից ոչ մեկը անասնատեր չի դարձել, մայիսի 19-ին հարձակվում են նորաստեղծ կոլեկտիվ անասնատնտեսության վրա եւ տանում ողջ անասունը:

Հաջորդ օրը կոլեկտիվ տնտեսության մարդիկ դիմում են շրջանի դատախազ պրն. Գուլումբիրյանին, որը երեք միլիցիոների հետ լինելով տեղում՝ խոստանում է քրեական գործ հարուցել:

Այդ փաստն ընթերցողներին ներկայացնելու օրից չորս ամիս անց խմբագրությունը նույն նամակագրից ստացավ երկրորդ նամակը, որով նա բողոքում էր, որ մինչեւ օրս ոչ մի միջոց չի ձեռնարկվել գողացված անասունները հետ վերադարձնելու ուղղությամբ:

Որոշեցինք կապվել շրջանի դատախազի հետ: Պարզվեց, որ, իրոք քրեական գործ հարուցված է ոչ միայն իր, այլեւ հանրապետության դատախազության կողմից, սակայն գործը ձգձգվում է: Բանն այն է, որ նման անասնաթալան է տեղի ունեցել 7 գյուղերում միաժամանակ, եւ գողությանը մասնակցել են ոչ թե 5-10 մարդ, այլ ամբողջ գյուղեր՝ հարյուրավոր մարդկանցով, որոնք չեն հրաժարվում իրենց արարքից եւ պատրաստ են վճարել իրենց տարած անասունների արժեքը, միայն թե դրանք թողնեն իրենց խնամքին:

Այսօր հանրապետության դատախազությունը խնդրին արդարացի լուծում տալու միջոց է որոնում:

Զրուցեցինք Արմավիրի շրջխորհրդի գործկոմի նախագահ պրն. Մխիթարյանի հետ:

- Սեփականաշնորհման ընթացքում շրջանի բոլոր անասնապահական ֆերմաները հանձնել էինք գյուղերին՝ կոլեկտիվ անասնապահական ձեւով խնամելու համար,- ասաց պրն. Մխիթարյանը: Մայիս ամսին կաթնամթերքի բանկացման կապակցությամբ բոլոր գյուղերում ծայր առան դժգոհություններ՝ թե ինչո՞ւ իրենց ամբողջ անասունը պիտի լինի 2-3 մարդու ձեռքին, եւ ոչ թե հավասարապես բաշխվի բոլորին: Իսկ դա, ինչպես գիտեք, հակասում է գործող օրենքին: Մենք արդեն վերասեփականաշնորհելու իրավունք չունեինք: Գյուղացիներն սկսեցին բողոքել մեզ, կառավարությանը, կենտրոնական սեփականաշնորհման հանձնաժողովին, որտեղից ստանալով «ՀՀ վերասեփականաշնորհման կարգ գոյություն չունի» միանշանակ պատասխանը, իրենց նախաձեռնությամբ հարձակվեցին ֆերմաների վրա եւ տարան անասունը:

Այստեղ մի լուրջ հարց կա՝ պետությանը ոչ մի մքերում չի կատարվում: Յուրաքանչյուր գյուղացի, որը մեկ կով է տարել, գտնում է, թե դրանով հազիվ հոգում է իր ընտանիքի կարիքները: Եւ այսօր չկա մի մեխանիզմ, որով կարողանանք գյուղացուց անասունները հետ վերցնել: Գյուղացին իրավացիորեն պատասխանում է, թե կոլտնտեսության նյութական բարիքները, հիմնական միջոցները ստեղծվել են իրենց բոլորի քրտինքով, եւ այդ անասունները պիտի բաշխվեին հավասարապես: Սակայն մեկական կով տալով գյուղացուն՝ մենք փաստորեն խախտում ենք օրենքն այն առումով, որ յուրաքանչյուր ընտանիք պիտի ունենա 5 գլխից ոչ պակաս անասուն, իսկ մեր գյուղացուն հասել է մեկ, հազվագյուտ դեպքում՝ 2 գլուխ:

Այնպես որ, քանզի գյուղացին չի հրաժարվում վճարել իր տարած անասունի արժեքը, երեւի մեզ մնում է գումարները գանձել եւ պարտադրել, որ նրանք այսուհետեւ պետությանը մքերում կատարեն:

ԼԵՅԼԻ ԴՇԽՈՅԱՆ

Ստեղծվել է գործազուրկների պաշտպանության հիմնադրամ

Հոկտեմբերի 14-ին «Միաբանություն» արհմիության նախաձեռնությամբ եւ 28 կազմակերպությունների մասնակցությամբ հրավիրված հիմնադիր ժողովը որոշեց ստեղծել «Հայաստանի գործազուրկների պաշտպանության» հասարակական հիմնադրամ: Կազմակերպության նախագահ է ընտրվել ՀՀ ԳԽ պատգամավոր, «Միաբանություն» արհմիության նախագահ Սեյրան Ավագյանը:

Հիմնադրամի միջոցները պետք է գոյանան անդամ կազմակերպությունների մուտքավճարներից եւ ամենամսյա վճարներից:

Ինչպես ասաց Ս. Ավագյանը, նորաստեղծ կազմակերպությունը նպատակադրել է *«աշխատավորությանը հասցնել ՀՀ «Զբաղվածության մասին» օրենքից բխող նրանց իրավունքները, նոր աշխատատեղերի ստեղծման համար աջակցել հիմնարկ-ձեռնարկություններին եւ անհատ մարդկանց»*: Խնդիր է դրված նաեւ հնարավորությունների սահմաններում օգնել ֆերմերներին՝ ագրոծառայություններ ստեղծելու ճանապարհով:

Կազմակերպությունն արդեն պաշտոնապես գրանցված է եւ հույս ունի, որ իր անմիջական գործունեությունը կսկսի մոտ ժամանակներում:

Հ. Պ.

Երկաթուղային փոխադրումների գները բարձրանում են

Մինսկում ավարտվեց ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի խորհրդի նիստը: Ինչպես «ԻՖ»ին հաղորդեցին համագործակցության մամուլի կենտրոնում, մասնակիցները պայմանավորվել են մոտ ժամանակներս 1,7 անգամ բարձրացնել բեռնափոխադրումների տարիֆները, 1,5 անգամ՝ ուղեւորափոխադրումներինը: Համաձայնություն է ձեռք բերվել նաեւ բաժանել եւ համատեղ օգտագործել նախկին միության վագոնային շարժակազմերը: Բաշխումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ-ում վագոնային գնացքաֆարշերի՝ նկատմամբ յուրաքանչյուր հանրապետության ունեցվածքի 1986-90 թթ. առկա տոկոսային հարաբերակցությունը:

Հայաստանից նիստին մասնակցում էր երկաթգծի վարչության փոխտնօրեն Վիկտոր Հարությունովը: Նիստի արդյունքներին եւ հայկական կողմի տեսակետներին ծանոթանալու նպատակով դիմեցինք վարչության տնօրեն Ղանդիլյանին: Վերջինս հավաստեց, թե Հայաստանը եւս ստիպված կլինի բարձրացնել տարիֆները, մենք նույն շրջայի օղակներն ենք, ուստի մեկ օղակում փոփոխությունը շրջայաձեւ փոխանցվում է մյուսին: Այդ առթիվ առաջարկությունն արդեն ներկայացվել է կառավարություն: Ինչ վերաբերում է շարժակազմերի բաշխմանը, պարոն Ղանդիլյանը նշեց. *«Քանի որ Հայաստանի 1986-90 թթ. շարժակազմային ցուցանիշները բավական բարձր են, մեր բաժինը նախկին միության ունեցվածքից բավականին մեծ եղավ»*: Իսկ խորհրդակցությանը գնահատական տալու մեր խնդրանքին պրն. Ղանդիլյանը պատասխանեց. *«Բոլոր խորհրդակցություններում էլ շատ լավ ու դրական որոշումներ են ընդունվում, կոնկրետ ու օգտակար խոսակցություններ տարվում: Դրանց ավարտից հետո է երեւում, թե այն ինչ հետեւանքներ, ինչ արդյունքներ կարող է տալ, ինչ օգուտներ կարելի է դրանից քաղել»*:

Պրն. Ղանդիլյանը հաղորդեց նաեւ, որ Ախուրյանի գծով վաղվանից Հայաստան կմտնի 100 հազար տոննա հացահատիկ:

Ա. Օ.

ԱՊՀ երկրների ներքին նախարարները Կիեւում

Հոկտեմբերի 21-22-ին Կիեւում կկայանա ԱՊՀ երկրների, ինչպես նաեւ Վրաստանի եւ Մերձբալթիկայի պետությունների ներքին նախարարների խորհրդակցությունը: Ինչպես «ԻՖ»ին հայտնի է դարձել կազմկոմիտեից, հանդիպումը թելադրված է նախկին ԽՍՀՄ տարածքում հանցագործությունների դեմ իրավապահ մարմինների համատեղ գործողությունների մեխանիզմների մշակման անհրաժեշտությամբ: Էստոնիայի եւ Լատվիայի հետ, որոնք խորհրդակցությանը մասնակցում էին որպես դիտորդներ, նախատեսվում է ստորագրել առանձին երկկողմանի համաձայնագրեր:

Երեկ խորհրդակցության մասնակիցներին պետք է ընդուներ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը:

Ինչպես երեկ տեղեկացանք Հայաստանի ներքին գործերի նախարարության լրատվական կենտրոնից, Հայաստանի պատվիրակությունը ներքգործնախարար Վանո Սիրադեղյանի գլխավորությամբ արդեն մեկնել էր Կիեւ: Նախատեսվում է, որ խորհրդակցության մասնակիցները կստորագրեն համաձայնագիր՝ հանցագործությունների դեմ համատեղ աշխատանքների վերաբերյալ: ■

Թուրքական մոդելը օրինակ

Կազանին հետաքրքրում է շուկային անցնելու թուրքական մոդելը եւ նա մտադիր է օրինակ վերցնել դրանից, «ԻՖ»ին տված հարցազրույցում հայտնեց Թաթարստանի արտաքին տնտեսական կապերի նախարար Շավկաթ Արսլանովը: Նա նշեց, թե *«խոսքը կույր ընդօրինակման մասին չէ: Մեր հանրապետությանն առավել ձեռնտու է փոքր եւ միջին ձեռնարկությունների մեխանիզմների զարգացումը»*:

Արսլանովի խոսքերով, որպես խորհրդատուներ Թաթարստանը կհրավիրի թուրքական մասնագետների: ■

digitised by A.R.A.R.@

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արեւելք» վերլուծական կենտրոն

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ

Գամբիտ (ֆրանսերեն gambit, իտալերեն dare il gambetto արտահայտությունից, որը բառգմանաբար նշանակում է որեւէ մեկին ոտ գցել), շախմատային պարտիայի սկզբնախաղի անվանում, ուր կողմերից մեկը զոհաբերություն է անում, առավել հաճախ զոհաբերվում է զինվորը...

Խորհրդային հանրագիտական բառարան, Մոսկվա, 1987

Հայաստանի իշխանության վերին շերտերում տեղի ունեցավ շոշափելի փոփոխություն, որն անխուսափելիորեն վերադասավորություն է առաջացնելու քաղաքական ողջ խաղատախտակի վրա: Հանրաքեությունից առաջին քաղաքականության որոշման եւ իրականացման երեք հիմնական օղակներից մեկի՝ արտգործնախարարության ղեկավարը պաշտոնաթող եղավ: Եթե նախարարի հրաժարականը կազմված լիներ բուն նախարարության գործունեության մեջ տեղ գտած թերություններից, կադրային քաղաքականության կամ ցանկացած այլ աշխատանքային խնդրի հետ, ինչպես փորձում են առաջացուցել նախագահի աջակիցները, ապա հազիվ թե այն այսչափ արժանի լիներ ուշադրության: Սակայն, քանի որ պաշտոնաթողության դրդապատճառը արտաքին քաղաքականության հիմունքներում տեղ գտած տարաձայնություններն էին, ապա կարծում ենք, որ Բաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականը եւ նրա հնարավոր հետեւանքները ավելի մանրակրկիտ քննարկումների կարիք ունեն:

Սկսենք առավել աննշան խնդիրներից: 1990 թ. հեղափոխության հաղթանակից հետո, երբ իշխանությունը հիմնականում կենտրոնացված էր Գերագույն խորհրդում, իսկ գործադիր մարմինները կաթվածահար էին, իրենց նոր ճակատագրի սպասումով, հանրաքվեության արտաքին քաղաքականությունն իրականացվում էր Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից, որը եւ մեծ հաջողությամբ սկիզբ դրեց դիվանագիտության մեջ սիրողականությանը, կրավորականությանն ու հետեւողական անհաջողություններին: Այն հետագայում լիարժեք ձեւով ժառանգելու էին արտաքին քաղաքականությունն իրականացնող նոր գործադիր մարմինները: ՀՀՇ-ի երկփեղկումից հետո ԱԺՄ-ին հարող Գերագույն խորհրդի նշված հանձնաժողովի դերն արտաքին հարաբերություններում հավասարվեց նվազագույնի, իր տեղը զիջելով երեք հիմնական օղակներին՝ արտգործնախարարությանը, պետական անվտանգության եւ քաղաքական վերլուծությունների գծով նախագահի գլխավոր խորհրդականներին իրենց աղարաներով հանդերձ: Ինչպես եւ պետք էր ակնկալել, նշված երեք օղակների միջեւ պայքար ծավալվեց արտաքին հարաբերությունների ոլորտում սեփական դերի մեծացման եւ դեկավարող դիրքեր գրավելու ուղղությամբ:

Քանի որ, ինչպես եւ բոլոր այլ հարցերում, արտաքին հարաբերությունների ոլորտում եւս վերջին խոսքը պատկանում էր նախագահին, ապա գերխնդիրը նրա կողմից առաջադրված ընդհանուր կաղապարի շրջանակներում քաղաքական գծի առաջադրումն ու հիմնավորումն էր եւ, անշուշտ, նախագահի հետ անհատական մտերմությունը: Ցանկացած տեսակետ, որը գոնե որոշ չափով հակասում էր Հայաստանի քաղաքականության վերաբերյալ նախագահի պատկերացումներին, ի սկզբանե դատապարտված էր, քանզի քաղաքականության մշակման ու իրականացման գործում անհատականացված մոտեցումը եղել եւ, կարծում ենք, մնում է առաջնայինը: Այս առումով աղեն մեկնաբանում երկու խորհրդականների դիրքերն ավելի շահավետ էին, քանզի մեկը նախագահի հեղափոխական ժամանակների զինակիցն էր, մյուսը սփյուռքում առաջինը հեղափոխությունը աջակցած հեղինակավոր գործիչը: Արտգործնախարարը զինակից չէր, այլ հրավիրված պաշտոնյա, որին ի սկզբանե հասկացված էր կատարողի երկրորդական դերը, որը, հարկ է ընդունել, նա փայլուն կատարեց: Հակասության սկիզբը կարելի է համարել այն պահը, երբ երկար ժամանակ իր պատասխանատու, սակայն համեստ դերը կատարող նախարարին այլեւս դադարեց բավարարել նման իրավիճակը եւ նա քաղաքականության ծրագրավորման գործի մեջ իր օրինական հասանելիք տեղը պահանջեց: Սակայն մեթոդները, որով արտգործնախարարը փորձեց պաշտպանել իր օրինական իրավունքները, հուշում են, որ առաջնայինը նրա համար զբաղեցրած պաշտոնի պահպանումը չէր, ոչ էլ իրականացվող քաղաքականությանը ցուցադրաբար դիմակայելը, այլ շատ ավելի կարեւոր մի խնդիր: Առաջին պարզունակ խնդիրը, որը լուծվեց նախարարի պաշտոնաթողությամբ, քաղաքականության մշակմանը լիարժեք մասնակցություն ցուցաբերելու հավակնող քաղաքական դեմքի հեռացումն էր բաներաբեմից: Սա ընդլայնում է այն տարածությունը, ուր դրսեւորվելու է երկու խորհրդականների ազդեցությունը եւ նրանցից յուրաքանչյուրին մոտեցնում է սեփական մենաշնորհի հաստատմանը: Բայց այն թերեւությունը, որով արտգործնախարարը հնարավորություն տվեց խորհրդականների տանդեմին եւ աղարային հեռացնել իրեն ճանապարհից, աղացուցում է, որ դա գիտակցված քայլ էր եւ նախարարը չէր վախենում իրաղարձությունների զարգացման նման ընթացքի գծով գլխավոր խորհրդականին, քանզի վերջինս առավել բացահայտորեն է մոտ կանգնած նախագահի ներկա քաղաքական գծին: Բոլորի համար ազգասեր նախարարի հեռացումը կազմված է լինելու հանրաքեության նախագահի անվան հետ եւ եթե ոչ այսօր, ապա վաղը, ներքաղաքական ցնցումների ժամանակ, սա ազդեցիկ գործոն կդառնա նախագահի հակառակորդների ձեռքին:

Հերթական անգամ աղարային ոլորտում հասարակության առջեւ չարիքի գլխավոր կրողը ներկայացվեց նախագահը: Միաժամանակ հասարակությունը հնարավորություն ստացավ եւս մեկ անգամ համոզվելու, որ նախագահն անձամբ կոշտ անհանդուրժողականություն է ցուցաբերում իր անմիջական շրջապատում այլախոհության ցանկացած դրսեւորման նկատմամբ, որը եւս այսօր նախագահի անձի դեմ ձեւավորվող տրամադրությունների ընդհանուր համատեքստում լրացուցիչ ազդակի դեր է խաղալու, երբ հաշվի առնենք, որ արտգործնախարարը մեծ համակրանք էր վայելում ժողովրդի շրջանում:

Ի վերջո, ի՞նչ էական բան էին կրում իրենց մեջ արտգործնախարարի ելույթը Սամբուլում եւ «Ռոյթեր»ին արած հայտարարությունները ԱՄՆ-ում: Մենք դա գնահատում ենք իբրեւ նոր քաղաքական կուրսի խիստ հակիրճ, փոքր-ինչ տարերային, բայց հստակ առաջադրում (հավանաբար նախարարն իր առաջադրած գծի գաղափարական եւ քաղաքական խորության ամբողջական կրողը չէ): Հայաստանը պետք է ակտիվ քաղաքական գործոն դառնա շրջանում, արմատական միջոցառումներ ձեռնարկի իր տնտեսական եւ հասարակական փլուզումը կանգնեցնելու համար: Թույլ, իր հարեւանների, առավել եւս Թուրքիայի առջեւ անպաշտպան եւ տնտեսապես նրանց կուլ գնացող Հայաստանը քաղաքական գործոն չէ եւ կովկասյան-միջինարեւելյան խաղատախտակի վրա իբրեւ այդպիսին հանդես գալ չի կարող: Ամեն տեսակ զիջողականությունների գնով արտաքին սպառնալիքն իրենից վանող, անարդյունավետ արեւմտամետությամբ տարված եւ ներքին փլուզումը կանգնեցնելու անկարող իշխանությունն այս խնդիրները լուծել չի կարող: Հայաստանը պետք է վերադրի մի նոր ներքին ցնցում, որը կհամախմբի ժողովրդին, կբարձրացնի թմբիրի ծանրությունը, կկանգնեցնի անկումը եւ Հայաստանը կվերածի իր չափանիշներին համապատասխանող ռազմաքաղաքական եւ տնտեսական գործոնի:

Մեծ քաղաքականության ստրատեգներն այդ ցնցումի հիմքում հավանաբար տեսնում են նոր ազգայնական զարթոնքը, իսկ օբյեկտի դերում, որի դեմ այն ուղղված կլինի՝ Թուրքիան: Ազգայնականության նոր պոռթկումը թերեւս վերջին հնարավորությունն է կասեցնելու հայ հասարակության անկառավարելի կազմալուծումը, իսկ Լեռնային Ղարաբաղի պատերազմի եւ պատմական անցյալի խնդիրների հանդարտումը ավտրիտար կամային իշխանության առկայությամբ կարող են անհրաժեշտ արդյունքներ տալ: Թուրքիան իր կողմից արեց հնարավոր ամեն բան, որպեսզի Հայաստանն ընդվզեր ԼՂՀ խնդրում եւ հայ-ադրբեջանական հակամարտության ընդհանուր համատեքստում նրա կողմնակալ միջամտության, Հայաստան եկող մարդասիրական օգնության ճանապարհները շրջափակելու եւ այլ հակահայ գործողությունների դեմ: Սակայն Հայաստանի իշխանությունների խուսանավելու հնարավորություններն անսահման են եւ, ուստի, պետք է սպասել նրան ընդվզելու եթե ոչ դրսի, ապա գոնե ներքին ազդակների ազդեցությամբ:

Դրա համար կար երկու ճանապարհ: Առաջին, ներկա նախագահի իշխանությամբ էական փոփոխություններ մտցնել իշխող ընտրախավի կազմում, հեռացնելով Թուրքիայի հետ սերտացման կողմնակիցներին, երկիրը կառավարելու անընդունակ ու ամոլ աղարաները եւ առաջին ոլան մղելով ազգային շահերը պաշտպանող, հանրապետությունը ամրացնելու ընդունակ քաղաքական դեմքերին: Երկրորդ, իրականացնել նույնը, աղազգային քաղաքականությամբ վարկաբեկված նախագահի փոփոխությամբ, աղարաային հեղաշրջման միջոցով, իշխանության բերելով ազգայնական մոլուցքով տարված, կոշտ ուժի գործադրմանն ընդունակ, բայց, իհարկե, իրական ազգային շահերին անտեղյակ ուժերին: Հայաստանի շահերը պահանջում են առաջինը, որի դեպքում հանրապետությունը կխուսափի ցավագին համաղեսներից, կպահպանի ժողովրդավարական նվազագույնը, առավելագույնս կվերահսկի իրադարձությունների զարգացումը: Արտաքին ուժերին ձեռնտու է երկրորդը, քանզի այս դեպքում քաղաքական կուրսի փոփոխությունը կկրի տարերային, զգացմունքային բնույթ, որի զարգացումը չի վերահսկվելու հայկական քաղաքական-ազգային մտքի կողմից: Ուստի ոչ թե Հայաստանի արտգործնախարարի գործողություններն էին պարզամիտ, այլ իշխանության աղարաի կողմից դրանց ընկալումը: Արտգործնախարարը մի վերջին հնարավորությունը տվեց նախագահին փրկելու իր իշխանությունը, դրանով իսկ հանրապետությունում ժողովրդավարության հիմունքները եւ կանխելու հեղաշրջման ճանապարհին երկրին սպասելիք ծանր փորձությունները: Եւ այն, որ այս իրողությունը չգիտակցվեց, դժբախտություն է ոչ միայն նախագահի, այլեւ ողջ հանրապետության համար:

Նշանակո՞ւմ է արդյոք, որ Բաֆֆի Հովհաննիսյանի հեռացումով վերջակետ է դրվում Հայաստանի արտաքին եւ դրանից ածանցվող ներքին քաղաքականության փոփոխության հարցի վրա: Բնականաբար ոչ: Պարզապես Հայաստանն անցնելու է դրա իրականացման վաստակաշատ տարերակի ճանապարհով: Քանի որ արագ եւ արդյունավետ փոփոխության հնարավորությունը մերժվեց կամ պարզապես չգիտակցվեց, այն տեղի կունենա ավելի երկար ժամանակահատվածում եւ շատ ավելի ցավոտ եղանակներով: Միայն աղարատային առանձին սիրողական քաղաքագետներ կարող են վստահեցնել, թե քաղաքականության փոփոխությունն չի սպասվում: Որպեսզի Հայաստանը ներսից ընդվզի, այն կոդողվի Վրաստանից, Ռուսաստանից եւ այլ հանրապետություններից հազարավոր գաղթականներով, կթեժացվի պատերազմը Լեռնային Ղարաբաղում եւ սահմանամերձ գոտում, ժողովրդի սոցիալական վիճակը կհասցվի առավելագույն անտանելի վիճակին, մի խոսքով՝ կկիրառվեն այլ ժողովուրդների վրա բազմիցս փորձված այն մեթոդները, որոնք ի վերջո հանգեցնում են անհրաժեշտ արդյունքին:

Արտգործնախարարի հրաժարականը միայն սկիզբն է այն ընթացքի, երբ կհետաքրքրվեն եւ աղարեզից կհեռացվեն իշխանության լծակներ ունեցող, առավել սպասի, կոռաղաստված եւ ցանկացած պայմաններում բիրտ ավտորիտարիզմին դիմակայելու ընդունակ քաղաքական գործիչները, որոնց անցյալ եւ ապագա գործունեության բազում թերությունները նրանց առավել քան խոցելի են դարձնելու: Այս նպատակով կօգտագործվեն եւ՛ մրցակցությունը իշխանության օղակների միջեւ, եւ՛ ընդդիմության ու ժողովրդի աղարացի բողոք-պահանջները, եւ՛, որ առավել կարեւոր է, նախագահի թողտվությունը աղարային՝ հավերժահարար տեսնելու իրադարձությունների զարգացման նման տրամաբանությունը խախտելու փորձեր անող ուժերի եւ գործիչների նկատմամբ, ինչին, ի վերջո, զոհ է գնալու նաեւ ինքը՝ նախագահը: Բայց այս ամենը տեղի է ունենալու ժամանակի եւ տարածության մեջ, ուր յուրաքանչյուր առանձին միջադեպ կարժանանա նեղ, աննորեական գնահատականի:

Այս իրադարձությունների մեջ մտահոգիչ է նաեւ այն փաստը, որ հանրապետության քաղաքական ուժերը, նախ եւ առաջ կուսակցությունները եւ հասարակայնությունը նվազագույն մասնակցություն, առավել եւս ազդեցություն ունեն իրադարձությունների ընթացքի վրա: Բարձր պետերում տեղի ունեցող փոփոխությունները անհրաժեշտից շատ ավելի թույլ արձագանք են գտնում հեռուստատեսության, խորհրդարանի եւ այլ համապատասխան օղակների շրջանում: Հասարակության եւ ընդդիմության համար միշտ վիճարկելի խնդիր պետք է մնա, թե իրականում ո՞վ պետք է լիներ իշխանության օլիմպոսը, ով շարունակեր իր աշխատանքը: Այլապես, երբոր աշխարհի տասնյակ այլ երկրների նման, Հայաստանում եւս բուն կդնի վերնախավային թավշյա կամ բիրտ հեղաշրջումների ոչակտիկան, որը ցանկացած հասարակության բնականոն զարգացման անհաղթահարելի խոչընդոտն է: ■

«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է
Apple® Macintosh®
համակարգիչների տեխնիկական ոլորտում:

Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաեւ



- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես. համակարգչային ձեւավորման պատվերներ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն. Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 56-1841, 56-2863

digitised by A.R.A.R.@

ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՆ Է ԱՆՑ, ԽՈՐՀԵԼՈՒ ԵՄ ԿՈՉՈՒՄ

ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ, *ԳԽ դատգամավոր*

Հայոց խորհրդարանի հանրաքեսությունում դարերի ու հացի մասակարարման եւ ճմռանը նախադասրասվելու ուղղությամբ տարվող աշխատանքի մասին օրեր-օրեր տեւած խորհրդավոր-փակ քննարկումներն ինձ հուսահատեցնում են վերջնականապես: Մենք դատգամավորներս, իրավունք չունենք այդքան շատախոսելու, կառավարության հետ մրցելով ժողովրդին դուր գալու արվեստում, ցույց տալով մեր տիեզերական անհանգստությունը, դրոֆեսիոնալ խորհրդարանը վերածելով ոչ դրոֆեսիոնալ կարգադրիչ մարմնի. ինչպե՞ս արդար բաշխել չունեցած հացը, որտեղի՞ց առանց ճանապարհի, դայմանագրերի ու դրամական միջոցների հացագնումներ ու վառելիագնումներ կատարել, ինչպե՞ս կազմակերպել հացի առեւտուրն ու վառելիքի խնայողաբար օգտագործումը: Չի կարելի: Մենք մեր ասելիքն ու անելիքն ունենք, որից համառորեն խուսափում ենք:

Ինչպե՞ս մենք հայտնվեցինք այս անմխիթար վիճակում: **Ո՞վ է թույլ տվել (ո՞վ է դատասխանատու) դատերազմող հանրապետությունում հանկարծ սպառել հացի՝ կարեւորագույն դարեքի, ստրատեգիական նշանակության վառելիքի վերջին փշրանքները ու լիտրը:** Իսկ եթե մեր ժողովուրդը չգերազանցեր ինքն իրեն ու չտոկար, տեղի տար ու հանձնվեր անկառավարելիության տարերքին: Այս հարցերի դատասխաններով դիտի սկսեին իրենց ելույթները խորհրդարանի նախկին ու ներկա վարչապետները: Ոչինչ չի տեղվի մեր հանրապետությունում առանց դետական դաշտոնյայի ու իշխանավորի անձնական դատասխանատվության արածի ու չարածի, ձախողվածի համար: Հիմա՝ երբ մենք սահմանագծին ենք: Որքան էլ դիմացկուն, որքան էլ գիտակից, հանրապետության քաղաքացին ուզում է այս ամենի վերջը տեսնել, իմանալ իշխանությունների գործողությունների ծրագիրը:

Ի՞նչ էր ուզում, ի՞նչ էր սպասում խորհրդարանից Հայաստանի կառավարությունը՝ ինձ մութ մնաց: Միթե՞ կառավարությունն այդքա՞ն համարձակություն ունի առանց որոշման հստակ նախագծի ու անելիքի օրեր շարունակ խորհրդարանի դահլիճում անցկացնելու համար: Ինչո՞ւ վարչապետ Խոսրով Հարությունյանն այդքան վճռականություն չունեցավ խորհրդարանին դարտադրելու իրավիճակի քաղաքական քննարկում. չէ՞ որ հանրապետություն բերող ճանապարհների ադաբերգափակումը, հանրապետության տնտեսության աշխատեցումը, հայ-ադրբեջանական դատերազմի կասեցումը նախ եւ առաջ քաղաքական վճիռ է ենթադրում:

Կյանքն անառարկելի ապացուցում է. հանրապետության իշխանությունների ձեռնարկած ու ձեռնարկելիք միջոցառումները Ղարաբաղում բեժացող դատերազմի, հանրապետության տնտեսական ու քաղաքական կյանքի բացառիկ ինքնամեկուսացման դայմաններում դատապարտված են ձախողման... Թվում է այսպանը դարտավոր էր արձանագրել հայոց խորհրդարանն ու անմիջապես լծվել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման իր անելիքների քննարկմանը, դառնալով խաղաղ կարգավորման գլխավոր գործոնը: **Ինձ անհրաժեշտ էր թվում, որ խորհրդարանը վերջապես որոշի.**

– **հանձնարարել ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությանը մինչեւ հաջորդ եռօրյա նիստերը խորհրդարանի քննարկմանը ներկայացնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման առաջարկների ու անելիքների փաթեթները,**

– **առաջարկել ՀՀ նախագահին հաջորդ եռօրյա նիստերին խորհրդարանին ներկայացնել հակամարտության խաղաղ կարգավորման Հայաստանի Հանրապետության դետական ծրագիրը... Սակայն խորհրդարանը հավատարիմ մնաց ինքն իրեն՝ որոշելով հրաժարվել հայեցության կախարդանքը տեղափոխել հաջորդ եռօրյա նիստ: Մինչ այդ կամ էլ կասկի, կամ իշատերը...**

Ղարաբաղյան դատերազմի 1989 թ. դեկտեմբերի 1-ի եւ 1992 թ. հուլիսի 9-ի որոշումների դարտադրանքը ոչ մի կերդ չհաղթահարող խորհրդարանը լռության ու չտեսնելու մատնեց Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներին, խորհրդարաններին, կառավարություններին, քաղաքական գործիչներին ու մտավորականներին ուղղված իմ դիմում-հայտարարությունը: Ոչ մի արձագանք: Հայտարարության ո՞ր մտքին ու առաջարկին համաձայն չեք: Խնդրեմ.

«Ղարաբաղյան խնդրի կարգավորումն անվերջ երկարում է: Հակամարտության կարգավորումը զինվորական ուժի միջոցով Ադրբեջանին ու Ղարաբաղին այսօր ցանկալի ձեւով երկուստեք մարդկային եւ նյութական ահագնացող կորուստներ են բերում, խորացնում Ադրբեջան-Հայաստան ռազմական առճակատումը: Երկու ժողովուրդների համար բախտորոշ այս ժամանակաշրջանում փոխանակ միմյանց սատար կանգնելու, փոխանակ Անկախ Ժողովրդավար Պետություն ստեղծելու՝ մեր ժողովուրդների վաղեմի երազանքին աջակցելու, փոխանակ մեր շրջանում տնտեսական-քաղաքական կյանքի ամենախրթին դժվարությունները համատեղ դիմագրավելու եւ հաղթահարելու, փոխանակ մեր ողջ կարողությամբ խաղաղ-բարգավաճ աշխատանքի լծվելու, մենք մեր նոր-նոր զորացող պետությունների դեռեւս թույլ հնարավորություններն ամբողջությամբ ուղղել ենք իրար դեմ՝ ավերելով մի քանի սերունդների տասնյակ տարիների քրտինքով անչա՞փ դժվարությամբ ստեղծածը: Կորուստներն այնքա՞ն ողբերգական են, որ չեն կարող չստիպել հակամարտող կողմերին ավելի ու ավելի համարձակ հրաժարվել հարցի զինական ուժի միջոցով լուծումից եւ անհրաժեշտ վճռականությամբ ու եռանդով լծվել հակամարտության խաղաղ կարգավորմանը: Արժանին մատուցելով Իրանին, Ռուսաստանին, Ղազախստանին, ԵԱՀԽ-ի բոլոր պետություններին՝ խաղաղ կարգավորման միջնորդական առաքելության համար, այսօր մենք տեսնում ենք, որ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիրն իրական բովանդակություն կստանա հայ-ադրբեջանական երկկողմ հարաբերություններում, դառնալով հակամարտության մասնակից բոլոր կողմերի համար ընդունելի ու իրագործելի:

Պատմականորեն դատապարտված ոչ միայն իրար կողքի, այլ իրար մեջ ապրելու՝ այս չհայտարարված, բայց օրըստօրե խորացող, անիբայց մատս-անհեռանկար, ինքնակործան մարտումը դիտի սխրյի մեզ վերջապես դրսեւորել այնքա՞ն անհրաժեշտ իմաստություն ու խիզախություն՝ հաղթահարելու երկու ժողովուրդներին բաժանող թշնամության ու վայրենության վիհը:

Մենք դիմում ենք Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին, խորհրդարաններին ու կառավարություններին, հասարակական-քաղաքական կազմակերպություններին ու մտավորական անձանց: Առանց որեւէ նախադայմանի, առանց որեւէ միջխաղայմանի, Երեւանում, Բաքվում թե այլուր, կոչում ենք անմիջական ուղղակի երկկողմ բանակցությունների:

Մենք համոզված ենք, որ մերժելով-փոխարինելով օտարության ու թշնամության մթնոլորտը փոխըմբռնման ու վստահության մթնոլորտով՝ կօգնենք մեր երկու անկախ պետությունների ղեկավարներին արագ խաղաղեցնելու հայ-ադրբեջանական սահմանները, գտնելու Ղարաբաղի հայ եւ ադրբեջանցի բնակիչների խաղաղ-ստեղծարար աշխատանքի ու հայրենի տանն առահով ապրելու հնարավորություններ, դառնալով Ղարաբաղի բնակիչների ապահով կյանքի երաշխավորները:

Պատերազմի ժամը երկարեց ցավալիորեն: Շրջանն է խաղաղ գործակցության: Չէ՞ որ մենք ունենք դրա համար անհրաժեշտ բարի կամք, իմաստություն, համարձակություն ու համբերություն»:

Հանցավոր-մերժելի է խորհրդարանի դահանջատեր կեցվածքը ու ոչ դատասխանատու վերաբերմունքը **օրերապիվ շաբի վերածված գոյատեւման հաց ու վառելիք արդար բաժանող կառավարություն...**

Վարչապետն է ուրիշ. Վրաստանից եկող ճնցքների սպասմանը փոխարինել է հյուսիսային Կովկասից ձգվող ավտոշարասյունների ժամանման տագնապը, փակված գազամուղին ու Հովհարային անջատմանը միացել է ներքին ու արտաքին տրանսպորտային հաղորդակցության լրիվ կազմալուծված իրականությունը, դետության ալյուրի դաստակ դրահեստների անհանգստությանը փոխարինել է օգտագործված վերջին բուռ ցորենի սարսափը... Իսկ խորհրդարանը կարծես ոչինչ չգիտի, նոր վարչապետին իր շխմբով հրավիրել է մարտագորգի, դարտադրելով նոր վարչապետին հայտնագործել մեր սպառված ներքին հնարավորությունների նոր շերտեր...

Իշխանության բարձրագույն մարմինների, դետական այրերի ու քաղաքական գործիչների կոչերով, «դետքեներով» ու «անհրաժեշտներով» ծանրացած որոշումներով, հասարակության վիճակը բնութագրող «կրիտիկական», «գերկրիտիկական», «կործանարար-կրիտիկական» բնորոշումներով, մեր այսօրվա իրականությունից ու մեր հնարավորություններից չսնվող, բայց «համազգային», «համադետական», «համահայկական-համադետական», համալիր-արմատական ծրագրերով, ամենաբուսափույթ ու ամենահրատաղ ձեւով, ճիչերով-աղաղակներով **մեր մանուկ հասարակություն-դետության բոլոր ներքին հնարավորությունների, ունեցած-չունեցածի համախմբումը, կենտրոնացումն ու արդար բաշխումը՝ տգեղի-անճարակի, մազոխիսի իդեալիզմն է ու ինքնախաբեությունը:** Շատ է վտանգավոր, քանզի վերջնական հյուծելու-արյունահամելու է հասարակություն ու դետություն:

Ոչ թե հայոց գերագույն լարումով ազգ-կազմակերպություն են ճգնում ստեղծել, սերնդին ազգային բացառիկության ոգի ներարկում ու հասարակության համադատասխան բարոյահաղթական մթնոլորտ ադահովում, որ ազգը սեփական հնարավորություններից վեր ու մեծդարավոր խնդիրները լուծի վերջապես... Ոչ ու հազար անգամ ոչ: Այլ հասարակությունով-դետությունով լծվում են այնդիսի խնդիրների իրագործմանը, որի ընթացքում համախմբվում-կազմակերպվում է ժողովուրդը, խթանվում-բացահայտվում են անձի-անհատի իրական հնարավորությունները: Անկախ Արցախ դետության, թե միացյալ Արցախ-Հայաստան դետության ստեղծումը երեկ ու այսօր մեր ուժերից վեր խնդիր էր, անժամանակ, որի իրագործումը դիտի բայբայեր ու բայբայեց հայոց նոր-նոր կայացող դետականությունը, բանդեր նոր-նոր ձեւավորվող քաղաքացիական հասարակության հիմքերը, մինչեւ հուսահատության ու թեւաթափության ասիճան բարոյալքեր նոր-նոր հոգեվոր ստրկությունից ազատվող հասարակությունն ու անհատին: **«Միացում», «դայքար, դայքար մինչեւ վերջ», «բացառիկ համաշխարհային ազգի առաքելության գիտակցում», «ազգափրկիչ տոտալ մոբիլիզացիա», «Անկախ Արցախը հայոց հոգեւոր վերածննդի լինելիության դարտադիր նախադայման»՝ ո՞վ իրավունք ունի ինձ, իմ սերնդին, իմ սաներին ու երեխաներին դարտադրել նման ընտրություն...** Ինչպե՞ս ենք ազատվելու այս դարտադրված ընտրությունից...

Այս ամենը եղել է: Արյունահամ մարտման համար անկախացած դետության խորհրդարան ու վարչապետով ու նախագահով սկսած, այսօրվա վարչապետով ու դատգանության դետնախարարով շարունակած լրացուցիչ իշխանություն ու լիազորություններ են դահանջում խորհրդարանից. «Տվեք ինձ որքան հնարավոր է մեծ իշխանություն, ու ես չեմ բավարարվի դրանով ու կդահանջեմ ավելին, անսահմանափակը: Որքա՞ն: Այնքան, որ բավարար լինի մեր նոր դետականության վերջնական կործանման համա՞ր»:

Երբ մեր ժողովրդավար Հայաստանի մի տեսակ ամոթխած, բայց իրական դատերազմը Ադրբեջանի հետ շարունակենք ներկայացնել մեր ժողովրդին որպես «ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթաց», ապա հասկանալի է, մի երբ է մնում՝ դատերազմող դետությանը համադատասխանող կարգավիճակով իսկական դատերազմ: Սա էլ է եղել: Ամեն անգամ Արցախում կրած դարտությունից հետո, հանրապետության տնտեսության կրիտիկական նոր փուլում, հասարակություն կերակրող նոր երակի փակման հետ, մեծովդսիկով զգաստանում ենք, անում ինքնախոստովանություններ, ափսոսում բաց թողած հնարավորությունների համար: Բայց շաս շուտով սովորում-հարմարվում ենք նոր իրավիճակին, ռուսներից ապաչած-դադաստած, վերջին դահին ուղարկված մի քանի ինքնաթիռ զինամթերքը ու տանկը ոգեւորում է մեզ, դարձնում ավելի վճռական ու կովող-մահադարս... Ազգովին մոռանում ենք ամեն մի ինքնախոստովանություն ու մեր կյանքի մի քանի անգամ ապրված իրողությունը, դառնում ավելի անփույթ, մինչեւ հաջորդ կոռուս ու կենցաղի նոր ցնցում: Ահա՛, հանրապետության խորհրդարանը, գործադիր իշխանություններն ու քաղաքական կազմակերպությունները, մի քանի օրվա հացահատիկի դաշարով ոգեւորված, Լեռնային Ղարաբաղում համեմատական կայունությամբ ոգեւորված, հաջորդ շաբաթ նորից կհանդիպեն խորհրդարանում, ու կհնչեն նորից բառեր, բառեր, բառեր...

Այս ամենը եղել է: Նորից կխճճվենք երրորդ կարգի կեղծիքի՝ վիճակագրության մեջ, նորից կտարվենք Ռուսաստանից, փարիզներից ու միջազգային վայրուսային հիմնադրամներից Ռուսաստանը ողողող վարկերի ու մարդասիրական օգնությունների հեռանկարներով: **Ո՞վ է թույլ է տվել մեզ երեխաների հաշվին կերակրվել, նրանց դարտք գրանցելով մեր այսօրվա ավերածն ու դարապուրը: Ե՞րբ ենք վերջապես աշխատելու, մեր քրտինքով մեր օրվա հացը վաստակելու:** Նորից կխուսափենք շիտակ-անհրաժեշտ խոսակցությունից. իրեր եւ իրողությունները իրենց անունով չենք կոչի, չենք փնտրի իրավիճակի համապատասխան քաղաքական վճիռներ ու չենք խիզախի՝ վերջապես:

Ղարաբաղյան վեճի կարգավորմանը նպաստող ինչպիսի՞ քայլեր եմ սպասում խորհրդարանից:

Խորհրդարանը դիտի գրաս ու ափսոսա 1992 թ. հուլիսի 8-ի իր ընդունած որոշման համար: Հնարավորություն տալով հանրապետության նախագահին ղարաբաղյան վեճի խաղաղ կարգավորման բանաձեւի գործադրման առավել հստակ ու վճռական քայլեր կատարելու:

Խորհրդարանը դիտի պահանջի հայ-ադրբեջանական զինված առճակատումից խաղաղ կարգավորման ռեժիմին անցումը՝ կոչելով հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպություններին ու մտավորականությանը իրենց նպաստը բերելու հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Խորհրդարանը դիտի ընդունի մեր ներկայացրած հայտարարությունը՝ ընդունելի խմբագրում-սրբագրումներով, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական փուլից կտրուկ անցում կատարելով հայ-ադրբեջանական ուղղակի ու ակտիվ երկխոսության փուլի:

Խորհրդարանը դիտի կասեցնի ցանկացած դետական դաշտոնյայի գործողությունն, ով իր քայլերով կարգելակի հայ-ադրբեջանական առճակատման կարգավորման ծրագրի ծավալմանը, շրջանի կայունացմանն ու մեր հարեւանների հետ բարիդրացիության հաստատմանը:

Խորհրդարանը դիտի նախաձեռնի Հայաստանի ու Ադրբեջանի Գերագույն խորհուրդների բարձր մակարդակի հանդիպումները, այդ հանդիպումներում վերջնական, երկկողմանի ընդունելի տեսի բերելով հակամարտության խաղաղ կարգավորման բանաձեւը:

Մենք երկար ժամանակ բարդ ենք մոտեցել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Պետության, իշխանությունների որոշումներով ու քայլերով խորացրել ենք հակամարտությունը, հասցնելով այն հայ-ադրբեջանական ատելացող զինված ընդհարման, իսկ անդրկուլիսյան քաղաքական խոսակցությունների ժամանակ ակնարկել ենք մեզ ընդունելի փոխզիջումների ու հակամարտության խաղաղ կարգավորման մեր առաջարկների մասին: Եկել է ժամանակը մեր մոտեցումը շտկելու: **Հայոց դետության ու իշխանությունների բոլոր որոշումներով ու գործողություններով** կանաչ ճանապարհ դիտի տանք ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանաձեւի գործադրմանը, ակտիվացնելով ու համախմբելով հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակիցների ջանքերը Հայաստանում, Ադրբեջանում ու շրջանում, մեզ հարեւան երկրներում: Իսկ առանց դետական աղմկոտ վճիռների, աննկատ ու արդյունավետ զորացնելով ինքնաղաշտպանությունն Արցախում, այն դիտելով որպես հակամարտության կարգավորման ոչ թե ճանապարհ, այլ հակամարտության խաղաղ կարգավորման այսօր անհրաժեշտ ուղեկիցը: Ուղեկից, առանց որի անհնար է ապահովել Ադրբեջան դետության կազմում Ղարաբաղի անվտանգությունն ու Ադրբեջանի քաղաքացի ղարաբաղցու՝ իր հողում ապրելու իրավունքը:

Սեպտեմբեր, 1992

digitised by A.R.A.R.@

Կահիրեի երկրաշարժի քաղաքական «դիմագիծը»

կամ ինչպես կարելի է պղտոր ջրերում ձուկ որսալ

Հոկտեմբերի 12-ին Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ընդհատեց իր այցը Չինաստան եւ վերադարձավ Կահիրե՝ օրվա երկրորդ կեսին տեղի ունեցած երկրաշարժի աղետին մոտիկից հետեւելու համար: Նույն օրը Եգիպտոսի վարչապետ Աթեֆ Սիդկին աղետի հետեւանքները վերացնելու նպատակով երկրում հայտարարեց արտակարգ դրություն, ինչպես նաեւ համաղազասխան նախարարներից կազմեց աշխատանքային մի խումբ իրավիճակի ընթացքը հսկելու համար: Բանն այն է, որ իշխանությունները մտավախություն ունեին որոշ քաղաքական եւ հատկապես իսլամական բոլոր հոսանքների կողմից իրադրության քաղաքական շահարկման եւ շահաբաժինների ձեռքբերման ուղղությամբ:

Այդ երկյուղները իզուր չէին, քանզի մի քանի տարիներից ի վեր ողջ երկրում մոլեգնում եւ ընդլայնվում է արմատականների քայքայիչ գործունեությունը: Հետեւաբար, երկրաշարժը նրանց համար դարձավ այն շարժառիթներից մեկը, որի միջոցով փորձեցին իրենց ազդեցության ոլորտները ընդարձակել պետության դանդաղ քայքայման ֆոնի վրա, ինչպես նաեւ համաղազասխան ինքնությունների վերականգնման ուղղությամբ:

Այդպես էլ դեղքերը զարգացան, երբ պետական աղարատի դանդաղկոտության հետ իսլամականները եւ նրանց ենթակայության ներքո գտնվող կառույցները ամենաարագն ու առաջինը արձագանքեցին երկրաշարժի աղետյալներին օգնության հասնելու եւ փրկարար աշխատանքներ տանելու գործին: Այս առումով «մարդասիրական օգնության կոմիտե»-ն ոչ պետական միակ հասատությունն էր, որն առաջինն էր տուժած վայրերում կարճ ժամկետում օգնություն ցուցաբերում: Այս կոմիտեն պատկանում է արհմիությանը, որին, ինչպես նաեւ բժշկական արհմիությունների վարչական խորհուրդների վրա իշխում է «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը: Քաղաքական դիտորդները պնդում են, որ այս եւ նման ջանքերը ժողովրդական բազմասերում գտնվող հազարավոր բնակիչների մեջ կվերածվեն քաղաքական հաղթանակների, մանավանդ որ նախադատրաստություններ էին սկսվել նոյեմբերին անցկացվելիք տեղական ընտրությունների համար:

Մյուս կողմից, ընդդիմության մյուս կուսակցությունները բավարարվեցին իրենց բերքերի էջերում կառավարությանը եւ իշխող ազգային ժողովրդական կուսակցությանը խիստ քննադատությունների ենթարկելով այն բանի համար, որ, ըստ նրանց, որոշ պատասխանատուների բերացման պատճառով պատշաճ ժամկետում տրամադրվող օգնությունն ու խնամքը չհասցվեցին աղետյալներին, որոնք չաղահովվեցին նաեւ բնակարաններով: Այդ մեղադրանքները մեղմելու նպատակով վարչապետ Ա. Սիդկին «Ալ-Մասա» թերթին հավաստիացրեց, թե իր կառավարությունը *«ձգտում է առլասան տալ բոլոր տուժածներին»*: Նա մեղադրեց որոշ «անկարգաղահների», որոնք քաղաքացիներին հորդորում են դիմելու ցույցերի եւ հավաքների, որոնցի առաջացրին ընդդիմության, մտավորականների եւ մարդու իրավունքների կազմակերպությունների շրջաններում, որոնք գտնում են, որ Ա. Հուսեյնի հանդեպ հետաքննությունը նրա քաղաքական տեսակետների համար ազատախոհության մթնոլորտի վատթարացման սկիզբն է Եգիպտոսում:

Երկրաշարժի դիմակի հետեւում ողողկված, բայց այլ հարթության վրա կատարված իրադարձություն էր հոկտեմբերի 14-ին Հորդանանի Հուսեյն թագավորի այցը Կահիրե՝ ցավակցելու նպատակով: Չնայած այն տեւեց մի քանի ժամ, բայց եւ այնպես չվրիպեց քաղաքական մեկնաբանների հայացքից, որոնց կարծիքով թագավորի այցը նպատակ ուներ մերձենալ Եգիպտոսի հետ: Հայտնի է, որ նրա այդ այցը առաջինն էր Ծոցի երկրորդ պատերազմից (Իրաք-Քուվեյթ) ի վեր, պատերազմ, որի ընթացքում Ամմանը հակադիր էր Բաղդադի դեմ հարձակվելու կեցվածքին, մինչդեռ Եգիպտոսը ռազմականապես մասնակցեց Իրաքի դեմ մղված գործողությանը:

Արդարեւ, դիտորդները կշրջանցեին եւ կանտեսեին այդ այցը, եթե այն չունենար իր նախադատմությունը, որն սկսվեց ընթացիկ տարվա մարտից, երբ Հուսեյն թագավորն այցելեց Վաշինգտոն եւ հանդիպեց նախագահ Բուշին: Դա նրա առաջին քայլն էր դեպի հակաիրաքյան կոալիցիայի երկրներ: Վաշինգտոնի այդ հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի նախագահը խոստացավ վերսկսել օգնությունները Հորդանանին, իսկ թագավորն էլ իր հերթին պարտավորվեց հետեւել ՄԱԿ-ի այն որոշմանը, որն Իրաքին ենթարկում է տնտեսական շրջափակման:

Իսկ վերջերս թագավորը 5 շաբաթով գտնվում էր ԱՄՆ-ում, բուժման նպատակով: Այդ ընթացքում նրան այցելեց Վաշինգտոնում Սաուդիայի դեսպան Բանդար Իբն Սուլթանը՝ փոխանցելով Ֆահդ թագավորի եւ իշխող ընտանիքի բարեմաղթանքները: Բայց ըստ թերթերի տեղեկությունների, այդ այցը տեւեց 2 ժամ, որը բավարար էր քաղաքական նախկին դիրքորոշումներին անդրադառնալու համար: Բացի այդ, պետք է նկատի առնել, որ Ծոցի պատերազմից հետո Ամմանի կապերը խզված են Ծոցի արաբ մայրաքաղաքների հետ: Նույն նպատակով Վաշինգտոնում նրան այցելեց նաեւ Եգիպտոսի դեսպանը:

Երկրորդ դեպքը, որն ըստ հորդանանյան թերթերի, որոշ չափով հալեցրեց քաղաքական սառույցը Ամմանի եւ Ալ-Ռիադի միջեւ, այն էր, երբ Ալ-Ռիադի էմիր Սալման Իբն Աբդուլ-Ազիզն այցելեց Սեուդիայի ցուցահանդեսի հորդանանյան տաղավարը, որն արժանացավ Ամմանի լրատվական միջոցների բարձր գնահատականին: Իսկ վերջերս Հորդանանում հրապարակվեց, որ Հուսեյն թագավորն առաջիկայում կմեկնի Մեքքա՝ Ալ-Ումրա (փոքր ուխտագնացություն) կատարելու համար, որի ժամանակ հավանաբար կհանդիպի Ֆահդ թագավորի հետ, որի ընթացքում կքննարկվեն երկկողմանի հարաբերությունները, եւ ինչու չէ, նաեւ Իրաքին արաբական տուն վերադարձնելու հարցը:

Այս առումով հատկանշական է հոկտեմբերի 15-ին Իրաքի գյուղատնտեսության եւ ոռոգման նախարարի Կահիրե կատարած այցը՝ իր ժողովրդի եւ կառավարության ցավակցությունը հայտնելու երկրաշարժի կապակցությամբ: Նա հայտնեց, թե իր երկիրը *«պատրաստ է բոլոր հնարավորությունները դնելու Եգիպտոսի տրամադրության տակ՝ աղետի հետեւանքները թեթեւացնելու համար»*: Եթե անդրադառնանք Հորդանանի վատթար տնտեսական եւ քաղաքական իրավիճակին, առա ավելի կհստականան Ամմանի վերոհիշյալ մանեւրները: Հայտնի է, որ Ծոցի ճգնաժամի նկատմամբ իր ընդունած դիրքի պատճառով Հորդանանը զրկվեց այն 300 միլիոն դոլլարից, որն ամեն տարի ստանում էր Ծոցի երկրներից՝ ըստ արաբական լիգայի գագաթաժողովների որոշումների: Եւ ի հետեւանս այդ նույն ճգնաժամի, 1991 թ-ից ի վեր նա ընդունեց ավելի քան 300 հազար պաղեստինցիների եւ հորդանանցիների, որոնք հեռացվեցին Ծոցի երկրներից, որն ավելի բարդացրեց նրա տնտեսական առանց այդ էլ տագնապալի վիճակը:

Այսպիսով, հետզհետե զուլալանում են պղտոր ջրերը եւ տեսանելի ապագայում, արդեն իսկ իրենց ուրվագծերը գցած, ձկնորսները ձեռք կբերեն իրենց ավարը: Այս առիթով արաբները կկրկնեին իրենց հայտնի եւ դիպուկ ասացվածքը՝ *«Ոմանց աղետներն օգուտ են բերում ուրիշներին»*:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Թագավոր Հասան Բ-ն փիլիսոփայում է

Մարոկկոյի թագավոր Հասան երկրորդը հայտարարեց, թե ինքը պահանջելու է ուլեմաներից (իսլամ իրավագետներից), որ մի քանի առաջարկներ ներկայացնեն իր երկրում անձնական հարցերի մասին օրենքի վերափոխման հնարավորության առնչությամբ:

Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թագավոր Հասան Բ-ն ընդունեց իր երկրի գեղեցիկ սեռի շարժումների եւ ընկերությունների ներկայացուցիչներին, որոնք ներկայացել էին պահանջելու Մարոկկոյի անձնական հարցերի մասին օրենքի վերափոխումը: Կանանց պասվիրակության ընդունելության ժամանակ Հասան Բ թագավորը ասաց, որ մյուս օրենսդրություններից առաջ իսլամը որդեգրել է այն հիմնադրույթը, ըստ որի արտոնությունները սկզբունք են, իսկ զրկանքները՝ բացառություն:

Մարոկկոյի թագավորն ասաց նաեւ, թե իսլամը պատրաստել է կանանց իրավունքները, մանավանդ բազմակնության ասպարեզում, որի համար որոշակի պայմաններ են դրվել: ■

Իրանական թերթը իրանա-ռուսական համագործակցության հեռանկարների մասին

Իրանական «Աբրար» թերթը տպագրել է մի մեկնաբանություն, որում վերլուծություն է տրվում իրանա-ռուսական համագործակցություն հեռանկարների մասին: Թերթի կարծիքով, Ռուսաստանը շահագրգռված է Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների զարգացմամբ: Նախ եւ առաջ, Իրանը պատնեշ է դեպի Միջին Ասիա եւ Անդրկովկաս քուրքական ներխուժման ճանապարհին, որտեղ Ռուսաստանը մի շարք քաղաքական եւ պատմական պատճառներով այսօր անհրաժեշտ ազդեցություն չունի: Բացի դրանից, Իրանը, որպես շրջանում ամենախոշոր երկրներից մեկը, որը ռազմական զգալի ուժ եւ մարդկային ռեսուրսներ ունի, կարող է կանխարգելել Արեւմուտքի, նախ եւ առաջ ԱՄՆ-ի հետագա թափանցումը Պարսից ծոցի գոտի: Այդ վերջինը լուրջ վնաս կհասցներ շրջանում Ռուսաստանի ազգային շահերին: Վերջապես, Իրանի եւ Ռուսաստանի համագործակցությունը Մոսկվային թույլ կտա բավականին լուրջ վայրաստային ներուծումներ կատարել պետական գանձարանում, այն դեպքում, երբ Արեւմուտքը չկատարեց իր խոստումը Ռուսաստանին բազմամիլիարդ ֆինանսական օգնություն ցուցաբերելու գործում:

Իրանը իր հերթին, շարունակում է «Աբրարը», նույնպես շահագրգռված է Ռուսաստանի հետ կապերի զարգացման գործում: Ռուսաստանի ռազմական, արդյունաբերական եւ տեխնոլոգիական հնարավորությունների օգտագործումը կբարձրացնի Իրանի պաշտպանունակությունը եւ նրա տնտեսությանը օգուտ կբերի մի ժամանակաշրջանում, երբ մի շարք արեւմտյան պետություններ Գերմանիայի պես չեն կատարում առաջներում Իրանի հետ ստորագրված համաձայնությունները: Իրանը կարող է համագործակցել Ռուսաստանի հետ՝ Միջին Ասիայում եւ Անդրկովկասում Թուրքիայի գաղութարար քաղաքականությանը հակադրվելով: Համընդհանուր քաղաքականության ոլորտում Թեհրանը հատկապես հնարավորություն ունի օգտագործել Ռուսաստանի ազդեցությունն Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության մեկուսացման եւ նրա կայունության քայքայման փորձերի չեզոքացման համար: Իրանի եւ Ռուսաստանի համագործակցությունը, գտնում է թերթը, անկասկած կօգնի շրջանային հակամարտությունների կարգավորմանը, այդ թվում նաեւ ղարաբաղյան խնդրին:

Ռուսաստանի եւ Իրանի միջեւ երկկողմանի համագործակցության զարգացման բարենպաստ հեռանկարներն ակնհայտորեն ձեռնտու չեն ԱՄՆ-ին, շարունակում է թեհրանյան թերթը: Այսպես, այդ հանգամանքը վերջերս որոշակի խոչընդոտ մտցրեց ռուս-ամերիկյան հարաբերությունների մեջ, երբ Վաշինգտոնը բողոքեց Մոսկվայի մտադրության դեմ՝ Իրանին վաճառել դիզելային երեք սուզանավ: Թերթն ընդգծում է այն փաստը, որ Ռուսաստանի ղեկավարությունը պարզապես արտահայտվեց ի պաշտպանություն այդ գործարքի, որը նրա հիվանդ տնտեսությանը կբերի 750 միլիոն դոլլար: ■

Հասան Բ-ն ուղեւորվում է միջին արեւելք

Մարոկկոյի թագավոր Հասան Բ-ն երեսնամյա ընդմիջումից հետո այցելում է Միջին Արեւելքի արաբական երկրները, հաղորդում է RFI կայանը: Նա կայցելի Սաուդյան Արաբիա, Կատար, Հորդանան, Սիրիա եւ Եգիպտոս, ուր այդ երկրների ղեկավարների հետ կքննարկի Միջին Արեւելքում խաղաղ կարգավորման եւ երկկողմանի հարաբերությունների հարցերը:

Գորբին Պոլտորանինի կափարիչի տակ

RFI կայանի մոսկովյան թղթակիցը հաղորդել է Ռուսաստանի տեղեկատվության նախարար Պոլտորանինի այն հայտարարությունը, թե Ռուսաստանի կառավարության տրամադրության տակ կան Գորբաչովի ստորագրությամբ հույժ գաղտնի փաստաթղթեր, որոնք վերաբերում են նախկին գլխավոր քարտուղարին, բայց իշխանությունները դրանք չեն հրապարակում ազգային անվտանգության շահերից ելնելով:

Ռաբինի հարցազրույցը արաբական «Ալահայաթ» թերթին

Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը այդ երկրի վարչապետներից առաջին է, որ հարցազրույց է ունեցել ոչ եգիպտական արաբական թերթի հետ: Հարցազրույցի ընթացքում նա ճանաչել է պաղեստինցիների ինքնիշխանության ձգտելու իրավունքը (նա ամեն կերպ խուսափել է օգտագործել «պետություն» բառը), բայց գտնում է, որ նրանք պետք է անցումային փուլ անցնեն, մինչեւ որ կդառնան միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ: Ռաբինը գտնում է, որ շուտ է անգամ անցումային փուլին անցնելը: Նա նախազգուշացրել է պաղեստինցիներին, որ նրանք չկրկնեն անցյալի սխալները, երբ պահանջում էին ամեն ինչ միանգամից եւ արդյունքում ոչինչ չէին ստանում: Ռաբինը հնարավոր է համարում, որ Իսրայելը զիջի արաբական տարածքների մի մասը, բայց ոչ երբեք ամբողջը: Ռաբինը, ի տարբերություն իր նախորդի՝ վարչապետ Շամիրի, արաբա-իսրայելական խաղաղ կարգավորման բանակցությունների արդյունավետությունը չի կապել Լիբանանի տարածից սիրիական զորքերի դուրս բերման նախապայմանի հետ: Հարցազրույցում նա պարզապես Լիբանանն անվանել է Սիրիայի պրոտեկտորատ եւ հույս է հայտնել, որ Սիրիան շուտով կկարգավորի իրավիճակն այդ երկրում: Ռաբինը խիստ դիվանագիտորեն հասկացրել է, որ բացառված չեն Իսրայելի անմիջական բանակցությունները Պաղեստինի ազատագրական կազմակերպության ղեկավարության հետ:

Դեն Քուեյլը հայհոյում է միայնակ մայրերին եւ կորցնում հեղինակությունը

Ինչպես հայտնում է «Լոս Անջելես»-ն, ԱՄՆ-ի փոխնախագահը հերթական նախընտրական հանրահավաքում վատ արտահայտվեց «Մորֆի Բրաուն» հեռուստաերիայի մասին, որի գլխավոր հերոսուհին միայնակ մայր է: Քուեյլը դժգոհություն հայտնեց, որ միայնակ մայրը «չի ուզում հասկանալ ամուսնու դերը երեխայի դաստիարակության գործում»: Այս հեռուստաերիայի ռեյտինգը շատ բարձր է Ամերիկայում՝ 28 միլիոն հեռուստադիտող: Քուեյլի քննադատությունից հետո «Մորֆի Բրաուն»-ի հեղինակությունն ավելի բարձրացավ, իսկ փոխնախագահը նորից միավորներ կորցրեց: Մեկնաբանները զարմանում են, թե ինչպես է Բուշի թիմը մեկը մյուսի հետեւից այդպիսի կոպիտ սխալներ թույլ տալիս:

digitised by A.R.A.R.@

ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) տնօրենը Կիևում

Ավարտվեց ԱՄՆ-ի ԿՀՎ-ի տնօրեն Ռոբերտ Գեյթսի երկօրյա այցը Կիև: Նրան ընդունեց Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը: Ուկրաինայի անվտանգության ծառայության նախագահ Եվգենի Մարչուկի հետ հանդիպման ժամանակ հստակեցվեցին երկու պետությունների հատուկ ծառայությունների գործունեության հարցերը՝ կապված զանգվածային ոչնչացման զենքի եւ դրա արտադրության տեխնոլոգիայի չտարածման, կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, միջազգային ահաբեկչության հետ:

Վաշինգտոնում Ռուսաստանի ներկայացուցչությունը զբաղվում է ենթադրյալով

Ինչպես գրում է «Լիտերատուրնայա գազետա» թերթը, Վաշինգտոնում Ռուսաստանի ներկայացուցչությունը, մասնավորապես վիզաների բաժնի վարիչ Ն. Գոմորեւը տարբեր տիպնու պատրվակներով մուտքի վիզաներ չի տրամադրում ամերիկացի գործարարներին, բժիշկներին, որոնք ձգտում են օգնել ռուսաստանցիներին այս դժվարին ժամանակներում: Այսպես, գիտնականներից մեկին թույլ չեն տվել մեկնել Ռուսաստան, պատճառաբանելով, թե հրավերի տեքստում համապատասխան տեղում բացակայում են «հարգարժան Ռուսաստանի ներկայացուցչություն» բառերը:

Իրանի որոշումը

Իրանը որոշում ընդունեց երկրի հյուսիս-արեւմուտքում տարածային նոր կազմավորման ստեղծման մասին: Նոր տարածքն Արդեբիլ մայրաքաղաքով կկոչվի Սաբալան եւ կհանդիսանա Իրանի վարչական 25-րդ միավորը: Այդ որոշման ծեւական առիթն Արդեբիլի բնակչության դիմումն էր Թավրիզ մայրաքաղաքով նախկին գավառից անջատվելու խնդրանքով, որը հիմնականում բնակեցված է ադրբեջանցիներով: Կառավարությունն այդպիսով փորձում է կանխարգելել ազգայնամոլության աճը ադրբեջանցիների միջավայրում:

Սլովակիա-Հունգարիա վեճն ավարտվեց

Դանուբ գետի վրա կառուցված ամբարտակը, որի բացումը կատարվելու էր երեկ, Սլովակիայի կառավարության որոշմամբ հետաձգվեց, պատասխանելով, որ այդ կապակցությամբ Հունգարիայի հետ վեճն ավարտվի Եվրոպական համայնքի երկրները ներկայացնող պատվիրակության միջնորդությամբ, որը արդեն ժամանել է: Հունգարիան, որն մինչ արեւելյան բլոկի փլուզումը Չեխո-Սլովակիայի գործընկերն էր ջրամբարակի կառուցման գործում, այնուհետեւ ոչ միայն մերժել էր իր բաժին նյութական պարտավորությունները կատարել, այլեւ դեմ էր գնացել այդ ծրագրին, այն համարելով շրջակա միջավայրի եւ իր համար աղետալի:

Լատվիայում արժեզրկման տեմպերը նվազել են

Ռիգայում ԱՄՆ-ի 1 դոլլարը հնարավոր է գնել 185 ռուբլով, ճիշտ է, լատիական: Լատվիայի բանկի նախագահ Էյնար Ռեպշեն ելույթ ունենալով խորհրդարանում, հաստատեց լատիական ռուբլու «ռեպշիկի» կայունացումը: Չնայած ապրանքների գներն առաջվա պես աճում են, արժեզրկման տեմպերը նվազել են եւ կազմում են ամիսը 15 տոկոս: Ռեպշեն ենթադրում է, որ մինչեւ հաջորդ տարվա կեսը հնարավոր կլինի ամբողջությամբ հաղթահարել դրամի արժեզրկումը:

Արձանները կան. ո՞վ պիտի տեղադրի դրանք

«Մովսես Խորենացի». Ասոս Պողոսյան

Երեւանի քանդակագործների արվեստանոցներում վաղուց պատրաստ են շատ արձաններ, որոնք սպասում են իրենց ժամին՝ զարդարելու քաղաքը:

Դեռեւս 1982-83 թթ. պատրաստ էր Դերենիկ Դեմիրճյանի արձանը (հեղինակն է Խաչիկ Իսկանդարյանը, ճարտարապետը՝ Ալան Մսիքարյանը): Այն նախատեսվում էր տեղադրել Օղակաձեւ զբոսայգում: 1983 թ-ից պատրաստ է Արամ Խաչատրյանի արձանը՝ քանդակագործ Յուրի Պետրոսյանի հեղինակությամբ, որը տեղադրվելու է օպերայի թատրոնի մոտ: 1989 թ. մրցույթ է հայտարարվել Տերյանի արձանի համար, որի մրցանակն ու պատվերն ստացել է քանդակագործ Նորիկ Կարգանդյանը: Այն նախատեսվում էր տեղադրել դրամատիկական թատրոնի այգու դիմաց, արհեստական լճի մոտ: 1991 թ. մայիսին ավարտվեց Այվազովսկու արձանի համար հայտարարված մրցույթի երկրորդ փուլը: Մրցանակը շնորհվեց Յուրի Պետրոսյանին, ճարտարապետ՝ Ռոմիկ Մարտիրոսյան: Արձանը դրվելու է «Մոսկվա» կինոթատրոնի մոտ: 1992 թ. մայիսին ավարտվեց Խորենացու հուշարձանի համար 1989 թ-ից սկսված մրցույթը: Տեղադրվելու է համալսարանի բակում (նոպատակը համալսարանը Խորենացու անվամբ կոչելն է): Հաղթող ճանաչվեց Ասոս Պողոսյանը:

Այս կոթողների մի մասը վաղուց ավարտված են, մյուսները մոտ են ավարտին: Սակայն քանդակագործի աշխատանքն ավարտվելուց հետո դրա իրացման մասին ոչ ոք չի հոգում: Միջոցներ չունենալու փողի տակ իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկում 10 տարուց ավելի պատրաստ արձանները տեղադրելու ուղղությամբ:

«Հովհաննես Այվազովսկի». Յու. Պետրոսյան, Ռ. Մարտիրոսյան

Քաղաքը կորել է աղբի ու փոշու մեջ, տեւեւացել ամենուրեք սնկի պես աճող ավտոտնակներից ու սեղանիկներից, վերածվել մեծ ու բափբփված տուկայի: Եթե նախկին ղեկավարները ձգտում էին ժողովրդի հիշողության մեջ մնալ կոթողներով, կառույցներով, ապա ներկա ղեկավարների մեջ, ցավոք, այդ «փառասիրությունը» չկա: Չկա՞ն մեծորյա բարերարներ, հովանավորներ, որոնք Երեւանի պատմության մեջ մտնելու փառասիրություն ունենան, թե՞ կան, սակայն արվեստագետները նրանց չեն գտնում, նրանք արվեստագետներին...

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Միլանահայ Հրանտ Փամբակյանը Մատենադարանին նվիրեց նոր գրքեր

Միլանահայ ազգային բարերար Հրանտ Փամբակյանը բազմաթիվ նվիրատվություններ է արել Հայաստանի մշակութային հիմնարկներին ու գրադարաններին: Նա Մաշտոցի անվան Մատենադարանի բարեկամներից է եւ իր կարյաց սահմաններում ձգտում է նպաստել նրա ձեռագիր ու տպագիր հավաքածուների ճոխացմանը: Հ. Փամբակյանն անձամբ բերել ու Մատենադարանի տնօրինությանն է հանձնել մի շարք ձեռագիր մատյաններ, որի համար պարգեւատրվել է «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով: 1989 թ. Մատենադարանի փոխտնօրեն Բարկեն Չուգասզյանի միջոցով նա ուղարկել էր երկու մեծարժեք ձեռագրեր եւ 16-րդ դարում տպագրված հազվագյուտ գրքեր, որոնցից մեկը Արիստոտելի «Մեխանիկա»-ի 1509 թ. փարիզյան հրատարակությունն է:

Վերջերս Միլանում կայացավ հունաբան դպրոցի ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողով, որին զեկուցումով մասնակցում էր նաեւ Մատենադարանի տնօրեն, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Սեն Արեւշատյանը: Վերջինիս միջոցով Հ. Փամբակյանը Մատենադարանին է ուղարկել երկու արժեքավոր գրքեր: Դրանցից մեկը 17-րդ դարի գերմանացի գիտնական եւ ճանապարհորդ Ադամ Օլեարիուսի 1635-1639 թթ. Ռուսաստան եւ Իրան կատարած ուղեւորության նկարագրությունն է, հրատարակված Գերմանիայի Շլեզվիգ Հոլվայն քաղաքում 1656 թ.:

Լավ պահպանված, կաշեկազմ, ավելի քան հազար էջից բաղկացած այդ գրքում արժեքավոր տվյալներ կան Ռուսաստանի, Իրանի, Անդրկովկասի մի շարք բնակավայրերի, նրանց բնակիչների, քաղաքական ու տնտեսական վիճակի, մշակույթի ու կենցաղի վերաբերյալ: Գրքում կան բազմաթիվ նկարներ ու քարտեզներ: Ուղեգրության արժեքը շատ բարձր է Ռուսաստանի եւ Իրանի 17-րդ դարի պատմության բազմաթիվ անհայտ էջեր ուսումնասիրելու տեսակետից: Հեղինակին ենք պարտական այն տեղեկությունների համար, որոնք վերաբերում են հարկահանությանը, մեծամասի մշակույթին, առեւտրին եւ այլն: Ըստ նրա, 17-րդ դ. 30-ական թվականներին Ղարաբաղն ավելի շատ հում մետաքս էր արտադրում, քան Հայաստանն ու Վրաստանը միասին վերցրած:

Հ. Փամբակյանի նվիրաբերած հաջորդ գիրքը տպագրական արվեստի գլուխգործոց է: Բացառիկ խնամքով ու մեծ վարպետությամբ հրատարակված այդ գիրքը նվիրված է Վատիկանի գաղտնի արխիվներում պահվող բազավորական հրովարտակներին ու նրանց վրա եղած ոսկե կնիքներին: Խ թիվս Ֆրանսիայի, Իսպանիայի, Հունգարիայի ու այլ երկրների տիրակալների կնիքների, գրքում տեղ է գտել նաեւ Կիլիկյան Հայաստանի Լեւոն Երկրորդ թագավորի ոսկե կնիքը: Լեւոն Երկրորդը թագավորել է 1199-1219 թթ. եւ պատմական գրագրություն է ունեցել Հռոմի պապի հետ: Նրա նամակը վավերացնող ոսկե կնիքի մի երեսին դրոշմված է իր՝ թագավորը, մյուս երեսին՝ զինանշանն է: Երկու կողմում էլ կա հայերեն հետեւյալ արձանագրությունը՝ «Լեւոն թագաւոր Հայոց»:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ամբողջ կյանքում ինձ հետաքրքրում էր ամոթի զգացումը»

«Այրեք իմ գրքերը, նրանք ոչ մեկին չեն փրկել», ասաց ադրբեջանցի հայտնի գրող Ամրամ Այլիսլին «Լիտերատուրնայա գազետա» թերթին տված հարցազրույցում: Նա խոստովանեց, թե «ամբողջ կյանքում ինձ հետաքրքրում էր ամոթի զգացումը: Մինչեւ վերակառուցումը ինձ տանջում էր այն միտքը, թե ինչ-որ մեկը նստած է բանտում իր համոզմունքների համար: Իսկ այժմ այդ զգացումը դարձել է անտանելի: Միշտ մտածում եմ, թե զոհվում են անմեղ մարդիկ: Վաղուց կասկածում էի, որ մարդկային սերունդը փոխվում է դեպի վատը, եւ այն նույնիսկ ամենասարսափելի երազում չէի կարող ենթադրել, որ այդչափ»: Այս անմիտ ջարդի մեջ գրողը գտնում է, որ «ընդհանուր չարացածության մթնոլորտում ինչ-որ մեկի «ազգային» շահերի համար տեղի ունեցող տրանդանոցում հեռանկարներ չկան»: ■

ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ

Ֆիշերի ժամացույցը

Բոբի Ֆիշերի տարօրինակությունների մասին շատ է գրվել, դրանք դարձել են սովորական բան: Սակայն այդ տարօրինակությունների փողի տակ թաքնված է խորամանկ, դրամատեր եւ գործունյա մարդը:

Հարավսլավական մրցախաղի հովանավորող եւ կազմակերպիչ Եզդիմիր Վասիլեւիչը կարողացավ լուծել եւս մի խնդիր, որը Ֆիշերի հնարամտություններից մեկն էր: Դա Ֆիշերի ժամացույցի հայտնի խնդիրն է:

1988 թ. ամերիկացի գրոսմայստերը հայտնագործեց եւ պատենտավորեց շախմատային նոր ժամացույցը, սակայն կարեւոր էր, որպեսզի այն ինչ-որ մեկը տարեր: Դա արեց մի ինժեներ, որին Վասիլեւիչը վարձեց Ֆիշերի Հարավսլավիա ժամանելուց 6 շաբաթ առաջ: Մրցույթի տնօրեն Յանոս Կուբաթը բացատրեց, որ Ֆիշերը եւ Վասիլեւիչի «Յուգոսլանսկի» ընկերությունը *«հուսով են մի տոննա փող շահել ժամացույցի վաճառից»*:

Առաջին 40 քայլի համար այդ ժամացույցը խաղացողներին երկու ժամի փոխարեն հատկացնում է 111-ական րոպե: Սակայն հենց որ շախմատիստը քայլ է կատարում, Ֆիշերի ժամացույցը նրան լրացուցիչ տալիս է եւս մեկ րոպե: Այսպիսով, քառասուներորդ քայլի ժամանակ յուրաքանչյուր խաղացող իր տրամադրության տակ ունի 151 րոպե, այսինքն՝ 31 րոպե ավելի, քան նրան ներկայիս խաղակարգով թույլատրված է: Արդյունքում՝ խաղացողներից ոչ մեկը չի կարող հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ, ասենք, նրան 10 քայլի համար մնում է մեկ րոպե, ինչպես պատահում է սովորական ժամացույցի ներկայիս կանոնների ժամանակ: Ֆիշերի ժամացույցի դեպքում պահեստում կմնա առնվազը մեկ րոպե:

40 քայլից հետո հաջորդ 20 քայլի համար կողմերն ստանում են եւս 40-ական րոպե, գումարած մեկական րոպե յուրաքանչյուր քայլի համար: 60 քայլից հետո Ֆիշերի ժամացույցը խաղացողներին տալիս է ավելի փոքր ժամանակ, քան այժմ գոյություն ունեցող համակարգի դեպքում. 30 րոպե՝ գումարած մեկական րոպե յուրաքանչյուր քայլի համար՝ 60-ից մինչեւ 80-ը: Գոյություն ունեցող համակարգի համաձայն խաղի այդ հատվածին գնում է մեկ ժամ: Ազդանշանային բարդ համակարգը խաղացողներին զգուշացնում է ժամանակի սպառման մասին: *«Այդ ժամացույցն ինձ դուր է գալիս, որովհետեւ, իմ կարծիքով, խաղը դարձնում է ավելի դինամիկ»*, ասում է իսլանդացի գրոսմայստեր Մ. Պետուրսոնը, քչերից մեկը, որը հասկացավ դրա աշխատանքի մեխանիզմը: *«Բոբին հաստավ նրան, որ խաղն ընդհանուր առմամբ երկարատեւ չլինի, եւ շախմատիստն էլ չհայտնվի ցայտնոտում»*:

«Նյու Յորք թայմս»

Առանց միջնախաղի

ՍՊԱՍԿԻ-ՖԻՇԵՐ

22-րդ պարտիա

Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. ձe2 ձf6 3. ձbc3 d6 4. g3 ձc6 5. փg2 g6 6. 0-0 փg7 7. d3 0-0 8. h3 ևb8 9. f4 փd7 10. փe3 b5 11. a3 ձe8 12. d4 cd 13. ձ:d4 b4 14. ձ:c6 փ:c6 15. ab և:b4 16. և:a7 և:b2 17. e5 փ:g2 18. Ա:g2 ձc7 19. ed ed 20. ձa4 և:a2 21. փb6 Ֆe8 22. և:c7 Ֆ:a4 23. Ֆ:d6 և:c2+ 24. և:c2 Ֆ:c2+ 25. փf2 Ֆe4+ 26. Ա:g1, ոչ որի:



Սիցիլիական պաշտպանության նման նոր սկզբնախաղում բացառիկ դեպքերում են 10-12 քայլերի ընթացքում համատարած փոխանակումներ կատարվում: Այդպիսի մի բացառություն էր 22-րդ պարտիան, որն սկզբնախաղից, փաստորեն, անցավ վերջնախաղի՝ միանգամայն հավասար հնարավորություններով: Սա մենամարտի ամենակարճատեւ հանդիպումն էր: Գ. Հ.

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկություն

1/32-րդ եզրափակիչ առաջին փուլ

«Բորուսիա» (Դորտմունդ, Գերմանիա) - «Սելտիկ» (Շոտլանդիա) 1:0

«Կայզերսլաուտերն» (Գերմանիա) - «Շեֆիլդ» (Անգլիա) 3:1

«Պանատինայկոս» (Հունաստան) - «Յուվենտուս» (Իտալիա) 0:1:

Կորչնոյը երիտասարդների դեմ

Թիլբուրգում շարունակվող շախմատի խոշորագույն մրցաշարում տեղի ունեցան քառորդ եզրափակիչ փուլի առաջին հանդիպումները:

Ուշադրության կենտրոնում էր գրոսմայստերներ, լվովցի Վասիլի Իվանչուկի եւ ամերիկացի Գարի Կասպարովի մրցավեճը, որոնց շատերը համարում են աշխարհի չեմպիոնի աղագա հավակնորդներ: Առաջին պարտիայում հաջողությունն ուղեկցեց Իվանչուկին:

Երիտասարդական ավյունով է խաղում շախմատային վետերանը՝ բազմափորձ Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա), որն առավելության հասավ մեկ այլ երիտասարդ գրոսմայստերի՝ մինսկցի Բորիս Գելֆանդի նկատմամբ: Պրեդրագ Նիկոլիչը հաղթեց Իլյա Սմիրինին: 4-րդ զույգը կազմում են Սայֆ Ադամսն ու Եվգենի Ավեշնիկովը: ■

Բաժինը վարում է Սուրեն ԲԱԴԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Հայաստանի արդյունաբերությունը կանգ կառնի

Ելցինը խոստանում է Տեր-Պետրոսյանին կարճ ժամանակում վերականգնել գազատարը

Հոկտեմբերի 20-ին Հյուսիսային Օսիայի տարածքում պայթած Թուրքմենստան-Ռուսաստան-Անդրկովկաս գազատարի վերականգնման համար կոպահանջվի ավելի քան 32 միլիոն ռուբլի: Այդ մասին «ԻՏԱ»-ին հայտնել է «Գազպրոմ» արտադրական միավորման պետ Կոստոլ Նիկոլաևվիչին: Վերանորոգման աշխատանքները, որոնք կատարում են ռուս եւ հայ մասնագետները, կտեւեն մոտ մեկ շաբաթ: Ռուսական «Կավկազտրանսգազ» միավորման ղեկավարությունը կտրականապես հայտարարել է, թե վերանորոգման համար պետք է վճարեն Վրաստանն ու Հայաստանը: Սակայն, մասնագետների կարծիքով, վթարը տեղի է ունեցել դիտավորյալ: Այդ դեպքում պետք է վճարի այն պետությունը, որի տարածքում այն կատարվել է: Ինչպես հաղորդել է «Գրուզտրանսգազ» միավորման գլխավոր ինժեներ Լեթի Չենլաձեն, գազատարի պայթյունի պատճառով Թբիլիսիի էներգամատակարարման կայանում հոկտեմբերի 21-ին ստացվել է սովորականից երեք անգամ փոքր գազ: Ակնհայտ է, որ որոշ ժամանակով կդադարեցվի նաեւ Վրաստանի մի քանի շրջանների էներգամատակարարումը:

Հայաստանի էներգետիկայի եւ վառելիքի նախարարությունը հայտարարել է, թե վթարի պատճառով Երեւան եւ Գյումրի քաղաքները գազատարում մնացած ճնշման հաշվին եւս մեկ-երկու օր գազ կստանան: Միեւնույն ժամանակ երեկ Հայաստանի կառավարությունում անցկացված նախագահության նիստի ժամանակ որոշվել է, որ վառելիքաէներգետիկ մատակարարման առաջնահերթությունը պետք է տրվի կենսաապահովման կարեւորագույն օբյեկտներին, միաժամանակ պետք է դադարեցնի արդյունաբերության աշխատանքը, իսկ մուտք գործող չնչին գազը կտրվի միայն ջերմաէլեկտրակայաններին: Հովհարային անջատումները կմնան 12-ժամյա գրաֆիկի սահմաններում:

Երեկ Մոսկվայի տեղեկատվական շրջանակներից մեզ հասած հավաստի տեղեկությունների համաձայն, տեղի է ունեցել Տեր-Պետրոսյան-Ելցին հեռախոսազրույց, որի ընթացքում Ռուսաստանի նախագահը խոստացել է կարճ ժամանակահատվածում օգնել վերականգնելու գազատարը:

■

Ադրբեջանում գտնվող ռուսական դիտորդները պահանջում են լրացուցիչ իրավունքներ

Ադրբեջանում գտնվող ռուսական ռազմական դիտորդների խմբի ավագ գեներալ-մայոր Վիտալի Գլուշչուկը մտադիր է առաջարկել Ռուսաստանի պաշտպանության ղեկավարությանը՝ ուժեղացնել հայ-ադրբեջանական բախման շրջանում խաղաղապահ առաքելությունը եւ իրենց տալ լրացուցիչ իրավունքներ: Նա առաջարկում է նաեւ հնարավորության դեպքում բարելավել իրենց նյութատեխնիկական հագեցվածությունը: Այդ մասին «ԻՏԱ»-ին հայտնեց ռուսական դիտորդների խմբի ներկայացուցիչ, գնդապետ Բորիս Պանկովը: Նրա խոսքերով, Գլուշչուկը Մոսկվա է մեկնել չորեքշաբթի առավոտյան՝ զինադադարը պահպանելու լրացուցիչ միջոցառումների մասին պայմանավորվելու: ■

Թեեւ պատերազմող երկիր ենք, բայց պետք է քարոզենք նաեւ տնտեսական խնդիրներ

Երեկ կայացած բրիֆինգում այսպես հայտարարեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը: Նա նշեց, որ անցած շաբաթ Մոսկվայում ունեցած բազմաթիվ հանդիպումների ընթացքում նա եւ իր տեղակալ Արամ Աբրահամյանը արտասահմանյան լրագրողներին ծանոթացրել են Հայաստանի եւ ԼՂՀ-ի իրավիճակին: Այդ աշխատանքում նրանց մեծ օգնություն է ցույց տվել ՀԲԸՄ-ի լրատվական գրասենյակի պատասխանատու Դեյվիդ Զենյանը: Մամուլի քարտուղարի կարծիքով, Մոսկվայում պետք է ստեղծվի հայկական մամուլի կենտրոն, որը կհամակարգի տեղի եւ արտասահմանյան թղթակիցների հետ տարվող աշխատանքը: Կրկին անդրադառնալով Ռ. Հովհաննիսյանի հրաժարականին, պրն. Շուգարյանը «Ազգ»-ին տված հարցազրույցում նշված բացթողումներին ավելացրեց նաեւ արտգործնախարարության կողմից ԱՊՀ շրջանակներում տարված պասսիվ գործունեությունը:

Նա նշեց նաեւ, որ արտգործնախարարի պաշտոնում առայժմ կոնկրետ թեկնածու չկա:

Այն հարցին, թե ինչու չեն ժամանել հրադադարին մասնակցող արտասահմանյան լրագրողները, նա հայտնեց, թե Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանում նստած մոտ 20 լրագրողներ Երեւան թռիչք չլինելու պատճառով չեն կարողանում ժամանել Հայաստան: Մամուլի քարտուղարը նշեց, որ արդեն 4 լրագրող է եկել, եւ հույս ունի, որ շաբաթվա ընթացքում կգան նաեւ մյուսները: ■

Գեղամ Հարությունյան. «Ադրբեջանի պաշտոնական անձինք Վրաստանին ներքաշում են հայ-ադրբեջանական հակամարտության մեջ»

Ինչպես հաղորդում է «Նեզա» գործակալությունը, Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական-վերլուծական կենտրոնի փոխտնօրեն Ազադ Իսազադեն հայտարարել է, թե ներկայումս Մեռածավոր Արեւելքից Հայաստանով եւ Լաչինի միջանցքով տեղափոխվում են 272 վարձկաններ:

Իսազադեն հայտարարել է նաեւ, որ Հայաստանը Վրաստանից ստացել է «Ստրելա» տիպի 21 կայանք, ինչպես նաեւ, որ Վրաստանից Հայաստան են ուղարկվել 1600 ռազմական մասնագետներ: Մեկնաբանության համար «Նոյյան տապան» գործակալությունը դիմել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանին, որն էլ հայտարարել է, թե *«ներկայումս ԼՂՀ-ում ոչ մի վարձկան չկա: Նման հայտարարությունը նպատակ ունի ադրբեջանական բանակի ռազմական անհաջողությունները վերագրել ԼՂՀ ինքնապաշտպանության ջոկատներում վարձկանների առկայությանը»:*

Հայաստանի նախագահի մամուլի կենտրոնի ղեկավար Ռուբեն Շուգարյանն իր հերթին հայտարարել է, որ *«Ղարաբաղում ներկայումս կան տարբեր ազգության վարձկաններ՝ ռուսներ, ուկրաինացիներ, կովկասցիներ: Նրանց թիվը մեծ չէ, բայց արտասահմանյան վարձկաններ Ղարաբաղում չկան եւ չեն եղել»*: Ինչ վերաբերում է Վրաստանից գնված զենքին եւ ռազմական մասնագետներին, ապա Վրաստանի պաշտպանության նախարարությունը հանդես է եկել այդ հայտարարության հերքմամբ, իսկ Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնի ղեկավար Գեղամ Հարությունյանը հայտարարել է, որ նման հաղորդումները ավելի վաղ տարածած աղաղակներն ոչ մի նոր բան չեն ավելացրել:

Այնուամենայնիվ, այս անգամ Ադրբեջանի կողմից փորձ է արվում նման հայտարարություններով հայ-ադրբեջանական հակամարտության մեջ ներքաշել Վրաստանին, քանզի Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը չի կարող տեղյակ չլինել, որ Հայաստանը Վրաստանից ոչ մի տեսակի զենք չի գնել եւ Վրաստանից Հայաստան ռազմական մասնագետներ չեն ժամանել: ■

«Արամ Խաչատրյան» Մեծ Համերգասրահ

68-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ

4485-4486 Հայոց Թվական

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր

ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Համերգաշրջանի հովանավորն է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը

23 հոկտեմբեր

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԵՆՐԻԿ ՄԱԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դիմադր Շտրաուս.

«Դորս երգ»

(Համամիկ Հացագործյան)

Գուսավ Մալեր.

Սիմֆոնիա թիվ 6

(Արմեն Բաբախանյան)

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

Սկիզբը՝ ժամը 19.30-ին:

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6,
հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55,
հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ մթնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

PUBLISET

Հայոցեսագրոբանկը ընդլայնում է իր կանոնադիր ֆոնդը եւ ս.թ. հոկտեմբերի 10-ից հայտարարում է բաժնետոմսերի լրացուցիչ բաժանորդագրություն

Հայոցեսագրոբանկը հրավիրում է բոլոր իրավաբանական անձանց եւ անհատ քաղաքացիներին ձեռք բերել իր բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի անվանական արժեքն է 10 հազար ռուբլի եւ 50 հազար ռ.:

Հայոցեսագրոբանկի 40 բաժանմունքների բազմաթիվ բանկային աշխատակիցներ ունեցող աշխատանքային կոլեկտիվները բաժնետերերին կառաջարկեն որակյալ բանկային սպասարկում՝ արտոնյալ պայմաններով:

Ձեռք բերելով Հայոցեսագրոբանկի բաժնետոմսերը՝ դուք կոգնեք ձեր դրամական միջոցները արժեզրկումից, դրանք ներդնելով հուսալի եւ բարձր շահութաբեր Հայոցեսագրոբանկի կանոնադիր ֆոնդում:

Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերով կարող եք զանգահարել Հայոցեսագրոբանկ 56.16.56, 56.15.01, հասցեն՝ Երեւան-10, Նալբանդյան 6, Շենգավիթի ագրոբանկ 44.86.74, 44.50.68
Էրեբունու ագրոբանկ 47.02.22, 47.04.02, իսկ հանրապետության մյուս վայրերում՝ ագրոբանկի շրջանային բաժանմունք:

Լուրերի Հոսք

Եղբայրները հավաքվել են

Հոկտեմբերի 30-31-ը Սամբուլում կիանդիոեն Ղազախստանի, Թուրքմենստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահները: Կքննարկվեն տարածաշրջանային խնդիրները եւ համագործակցության հեռանկարները: Այդ մասին Աշխարհում կայացած մամուլի ասուլիսում հայտնել է Թուրքմենստանում Թուրքիայի դեսպան Սելջուկ Ինչեսուն: Նրա խոսքերով, հանդիպման վերջում հնարավոր է սամբուլյան հռչակագրի ընդունումը: Այդ հանդիպումների նախագահները Սամբուլ են հրավիրվել Թուրքիայի անկախության օրվա առթիվ: ■

Դիրքային հրաձգություն

Ինչպես աբխազական, այնպես էլ վրացական աղբյուրների տեղեկությունների համաձայն, հոկտեմբերի 21-ի գիշերը շարունակվել է փոխհրաձգությունը Սուխումի մոտ գտնվող Գումնիսի գետի երկայնքով: Աբխազիայի պաշտպանության նախարարության տվյալներով, վրացիները օգտագործում են ծանր հրետանի եւ «Գրադ» կայանքներ: Չորեքշաբթի օրը Սուխում է ժամանել վրացական ոստիկանության հատուկ ստորաբաժանումը, որի նպատակը դիակապտության եւ դիվերսիոն խմբերի դեմ պայքարն է: Վրացական աղբյուրների համաձայն, աբխազական մի դիվերսիոն խումբ փորձել է հարձակվել Գուլրիփշի շրջանում տեղակայված վրացական զորքերի դիրքերի վրա: Պատասխան կրակից հետո դիվերսանտները ցրվել են: ■

Խաղաղ հեղաշրջում է պետք

Արկադի Վոլսկին հայտարարել է, որ կողմ է իշխանությունների ոչ թե բռնի, այլ խորհրդարանական ուղիով փոփոխությանը: Նա շեշտեց, թե կենտրոնամետ «Քաղաքացիական միությունը», որի կազմում ընդգրկված են Ռուսաստանի ձեռներեցների եւ արտադրողների միությունը, Ալեքսանդր Ռուցկոյի «Ազատ Ռուսաստան» ժողովրդական կուսակցությունը եւ Նիկոլայ Տրավկինի Ռուսաստանի ժողովրդավարական կուսակցությունը, մտադիր են պայքարել խորհրդարանում մեծամասնության հասնելու եւ նոր կառավարություն ստեղծելու համար: ■

Արտերը թանկ հաճույք է

Լիտվայի կառավարությանը կից վիճակագրության դեպարտամենտի տվյալներով, վերջերս ավելի արագ են թանկանում սննդամթերքը (անցյալ ամիս՝ 34 տոկոս), տրանսպորտային եւ կենցաղային ծառայությունները (33 եւ 26 տոկոս): ■

Լուրերը՝ ինտերֆաքսի «Մոսկվի», «Նոյյան տապանի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրեն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան 21.10.1992

Դասիչ 69149
Պատուէր 1568

digitised by A.R.A.R.@